

## ՕՍԻԿ ԽՈՍՏԱՑԱԾ Է ԶԱԶԱԿՑԻԼ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՇՐՋԱՆՑՈՂ ԵՐԿԱԹՈՒՂԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹԵԱՆ

Ամերիկայի Հայկական Համագործակցության Կազմակերպության ժողովրդավարական Հաստատությունները եւ Մարդու Իրաւունքներու Գրասենեակը (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) Մայիս 25-ին հրապարակեց Հայաստանի խորհրդարանական ընտրութիւններուն վերաբերեալ երկու ամիս տեւած դիտորդական առաքելութեան միջանկեալ գեկոյցը, որ կու գայ հարցականի տակ դնելու Մայիսի 12-ի ընտրութիւններու ազատութիւնն ու արդարութիւնը:

Հետընտրական միջանկեալ առաջին գեկոյցը զգալիօրէն կը տարբերի ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի նախորդ բոլոր գեկոյցներէն, որոնց մէջ կ'ըսուէր, թէ Հայաստան ընդհանուր առմամբ յառաջընթաց արձանագրած է ընտրութիւններու կազմակերպման գործին մէջ:

«Ընտրական գործընթացի վերջին փուլերու ընթացքին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի դիտորդական առաքելութիւնը որոշակի անհամապատասխանութիւններ նկատած է սահմանուած կարգաւորումներէն, ինչպէս նաեւ շեղումներ՝ ընտրական լաւագոյն փորձերէն, որոնք չեն նպաստէր ընտրական գործընթացի նկատմամբ հանրութեան վստահութեան ամրապնդման», - ըսուած է գեկոյցին մէջ:

Դիտորդական առաքելութիւնը տարբերութիւններ նկատած է, ընտրատեղամասերու մէջ հաստատուած արձանագրութիւններու պատճէններու եւ ընտրատարածքները:

## ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԸ ԵՏ ԴԱՐՁ ԿԱՏԱՐԵԼՈՎ ՀԱՐՑԱԿԱՆԻ ՏԱԿ ԿԸ ԴՆԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՈՒ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ

ներ բերուած նախնական արդիւնքներուն միջեւ:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի դիտորդական առաքելութիւնը 108 տեղամասերու մէջ հետեւած է ընտրական յանձնաժողովներու կողմէ քուէներու հաշուարկին եւ արդիւնքներու արձանագրութիւններու ամփոփման:

«Ընտրատեղամասերու 35 տոկոսի պարագային, ուր հաշուարկը դիտարկուած է, տեղամասին յանձնաժողովներու անդամները դժուարութիւն ունեցած են արդիւնքներու արձանագրութիւնները լրացնելու մէջ եւ 11-ի պարագային դիտարկուած է, որ տեղամասին յանձնաժողովը արգիլուած գործողութիւններ կատարած է՝ փոխելով արձանագրութեան սկզբնական տուեալները»:

«Ընդհանուր առմամբ, դիտորդները ամփոփման անցկացումը ընտրատարածքային յանձնաժողովներու 35 տոկոսի մօտ գնահատած են որպէս վատ կամ շատ վատ», - ըսուած է գեկոյցին մէջ:

Առաքելութիւնը արձանագրած է նաեւ Ընտրական օրէնսգրքով արգիլուած գործողութիւններ. - «Դիտարկուած է, որ 14 ընտրատարածքային յանձնարարական տուած են փոխել տեղամասին ընտրական յանձնաժողովներու արձանագրութիւններուն մէջ ամփոփուած «սկզբնական տուեալները»: 7 ընտրատարածքային յանձնաժողովներու մէջ քուէաթերթիկները:

«Ընտրական օրէնսգրքով արգիլուած է, որ 14 ընտրատարածքային յանձնաժողովներ փոխած են կամ յանձնարարական տուած են փոխել տեղամասին ընտրական յանձնաժողովներու արձանագրութիւններուն մէջ ամփոփուած «սկզբնական տուեալները»: 7 ընտրատարածքային յանձնաժողովներու մէջ քուէաթերթիկները:

## ՍԴՅԿ ՀԱՅ-ԱՄԵՐԻԿԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԲՈՂՈՔԻ ՆԱՄԱԿ ՅՂԱԾ Է ԵԱՀԿ-Ի ԴԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՆ

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան հովանաւորութեան տակ գործող Հայ Ամերիկեան Խորհուրդը (ՀԱԽ) բողոքի նամակ մը յղած է Եւրոպայի Ապահովութեան եւ Համագործակցութեան Կազմակերպության (ԵԱՀԿ) դեկավարութեան, Մայիս 12-ի Հայաստանի խորհրդարանական ընտրութիւններուն առթիւ ԵԱՀԿ ժողովրդավարական Հաստատություններու եւ Մարդու Իրաւունքներու Գրասենեակի դիտորդական առաքելութեան տուած գնահատականին կապակցութեամբ:

«Ձեր նախնական գեկոյցը կը հաստատէ թէ ընտրութիւնները տեղի ունեցան միջազգային չափանիշներուն համապատասխան: Սակայն, գեկոյցը շարունակելով կը յայտնէ թէ, բազմաթիւ խախտումներ նկատուած էին կապուած կեղծանձազրեբու օգտագործման, փոքր կուսակցութիւններուն տրուած ձայները իշխանական կուսակցութիւններու կողմէն մէջ դնելու եւ այլն»,

ըսուած է ԵԱՀԿ գործող նախագահ Միկէլ Անիել Մորաթինոսին հասցեագրուած նամակին մէջ:

ՀԱԽ-ի նամակը շարունակելով կը յայտնէ թէ, նախնական գեկոյցէն ասդին ի յայտ կու գան նոր փաստեր, որոնք ցոյց կու տան թէ ընտրախախտումները շատ աւելի լայնածաւալ էին եւ յաճախակի, ինչ որ կասկածի տակ կ'առնէ ամբողջ ընտրական գործընթացը:

«Նախնական գեկոյցին մէջ տեղ գտած ձեր դրական մօտեցումը նուազագոյն առումով իսկ, մտահոգիչ է եւ շփոթ յառաջացող, ոչ միայն Հայաստանի ժողովուրդին, այլ նաեւ սփիւռքի հայրութեան, որոնց միակ փափաքն է տեսնել բարգաւաճ Հայաստան մը, ուր տիրող օրէնքի գերակայութիւնն է եւ ժողովուրդի հիմնական իրաւունքները պաշտպանուած են: Այս առումով, ձեր տեղեկագիրը ու-

նոր պարունակող պարկերը կամ չկնքուած բերուած են տեղամասային յանձնաժողովներէն կամ յստակ կերպով կնքուած են եւ կրկին բացուած: Թիւ 19 ընտրատարածքային յանձնաժողովի պարագային (Վաղարշապատ) դիտորդները տեսած են, թէ ինչպէս քուէաթերթիկներու չկնքուած պարկերը տարուած են Հանրապետական Կուսակցութեան քարոզչական շտաբ եւ ապա կնքուած ետ բերուած՝ ընտրատարածքային յանձնաժողովի տարածք»:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի դիտորդական առաքելութեան ղեկավար, դեսպան Պորիս Ֆրլեց առաքելութեան թիւ 1 հետընտրական միջանկեալ գեկոյցը ներկայացուց Հայաստանի Արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանին՝ յայտնելով, թէ փաստաթղթին մէջ տեղ գտած փաստերը հիմնուած են յստակ դիտարկումներու վրայ եւ առաքելութիւնը պիտի շարունակուի հետեւիլ Սահմանադրական Դատարան ներկայացուելիք դիմումներու ընթացքին:

«Ոգեկոչում ենք Հայաստանի առաջին Հանրապետութեան հռչակումը, որ նուիրագործուած է Սարդարապատում, Բաշ-Ապարանում եւ Ղարաքիլիսայում մեր ժողովրդի մղած մայրամուտի հերոսամարտերի նուիրական ու պանծալի յիշատակներով: Այսօր վերստին անկախ է մեր Հայրենիքը: Մայիսեան փառապանծ յաղթանակներով փրկուած հայրենի փոքրիկ հողի վրայ մեր ժողովուրդն ապրում է իր ազատ նոր կեանքը, շինացնում Հայրենիքը, առ Աստուած նոյն հաւատով եւ առ հայրենին նոյն սիրով մարմնաւորում միացեալ ու պայծառ ազգային մեր կեանքի իղձերն ու ձգտումները»,- իր խօսքին մէջ ըսաւ Վեհափառ Հայրապետը:

Վարչապետ Սերժ Սարգսեան իր կարգի ըսաւ. - «1918 թուականի մայիսի 28-ին՝ դարերի ընդմիջումից յետոյ, հայոց անկախ պետականութեան վերականգնումն արդիւնքն էր Սարդարապատի, Բաշ-Ապարանի եւ Ղարաքիլիսայի հերոսամարտերում տարած պատմական յաղթանակների, որոնք ձեռք բերուեցին մեր ժողովրդի բոլոր խաւերի համագային սիրանքի շնորհիւ»:

## ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՈԳԵԿՈՉԵՑ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ

Մայիս 28-ին Հայաստանի մէջ նշուեցաւ Հանրապետութեան տօնը: Այս առթիւ օրհնութեան խօսքով հանդէս եկաւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին երկրորդը:

«Ոգեկոչում ենք Հայաստանի առաջին Հանրապետութեան հռչակումը, որ նուիրագործուած է Սարդարապատում, Բաշ-Ապարանում եւ Ղարաքիլիսայում մեր ժողովրդի մղած մայրամուտի հերոսամարտերի նուիրական ու պանծալի յիշատակներով: Այսօր վերստին անկախ է մեր Հայրենիքը: Մայիսեան փառապանծ յաղթանակներով փրկուած հայրենի փոքրիկ հողի վրայ մեր ժողովուրդն ապրում է իր ազատ նոր կեանքը, շինացնում Հայրենիքը, առ Աստուած նոյն հաւատով եւ առ հայրենին նոյն սիրով մարմնաւորում միացեալ ու պայծառ ազգային մեր կեանքի իղձերն ու ձգտումները»,- իր խօսքին մէջ ըսաւ Վեհափառ Հայրապետը:

Վարչապետ Սերժ Սարգսեան իր կարգի ըսաւ. - «1918 թուականի մայիսի 28-ին՝ դարերի ընդմիջումից յետոյ, հայոց անկախ պետականութեան վերականգնումն արդիւնքն էր Սարդարապատի, Բաշ-Ապարանի եւ Ղարաքիլիսայի հերոսամարտերում տարած պատմական յաղթանակների, որոնք ձեռք բերուեցին մեր ժողովրդի բոլոր խաւերի համագային սիրանքի շնորհիւ»:

**ՀԱՅԱՍՏԱՆ  
 ԿԱՍԿԱԾՈՎ ԿԸ  
 ՄՕՏԵՆԱՅ ՊԱՔՈՒԻ  
 ՍԷՋ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԾ  
 ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ**

Ատրպէյճանական մամուլը տեղեկացուցած էր, թէ Միւնխի Խումբի ֆրանսացի համանախագահ Պեռնար Ֆասիէ Պաքուի մէջ յայտարարած է, որ «Հայաստան պէտք է ազատէ 7 շրջանները» եւ թէ «Լեռնային Ղարաբաղ Ատրպէյճանի անբաժանելի մասն է»,-

Հայաստանի Արտաքին Գործոց նախարարութեան բանբեր Վլատիմիր Կարապետեան մեկնաբանելով այս տեղեկութիւնը յայտնեց, որ ինք կը կասկածի թէ Պեռնար Ֆասիէ նման յայտարարութիւն կատարած ըլլայ: «Համանախագահները հիանալի գիտեն իրենց մանդատը, ըստ որի՝ չեն կարող բանակցութիւններ իրենց կանխորոշող յայտարարութիւններ անել», - ըսած է Վլատիմիր Կարապետեան:

**ԸՆՁՆԱՆՆԵՆ ԱՍՏՈՒԼ**

**ԴԻՏՈՐԴԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻՑ ԲԱՑԱՏՐՈՐԻ ՎԻՃԱԿ ՄԵԿ ՔԱՅԼ Է**

Հայաստանն ապրում է սպասման մէջ: Բոլորին, կամ գրեթէ բոլորին հետաքրքրում է հարցը, թէ ինչպէս են պաշտօնները բաժանելու Ռոբերդ Քոչարեանն ու Սերժ Սարգսեանը: Մայիսի 12-ի արդար ընտրութեան ոգին ենթադրում է, որ պաշտօններն էլ պէտք է բաժանուեն «միայն արդարաբար», թէեւ եթէ Ռոբերդ Քոչարեանը կամ Սերժ Սարգսեանը առաջնորդուեն արդարութեան սեփական պատկերացումով, ապա ոչ մի պաշտօն էլ չեն բաժանի, այլ հալալ կէս կ'անեն: Բայց դա իհարկէ ժողովրդավարութեան սկզբունքներին դէմ է, իսկ մեր իշխանութիւնն էլ դէմ է ժողովրդավարութեան սկզբունքներին դէմ քայլերին: Հետեւաբար կարելի է վստահ լինել, որ պաշտօնները բաժանուելու են: Հարց է միայն, թէ ում են դրանք բաժանուելու: Այդ առումով ակնյայտ է, որ Սերժ Սարգսեանն ու Ռոբերդ Քոչարեանը կանգնած են բաւական բարդ ընտրութեան առաջ: Այդ բարդութիւնը առաջացնում է ոչ թէ կազմերի պակասը, այլ աւելցուելը: Նրանք երկուսն էլ ունեն անքան շատ գինակիցներ ու թիմակիցներ, որ չափազանց դժուար է լինելու որոշել, թէ ում ինչ է հասնելու: Առաւել դժուար է որոշել, թէ ում ինչ չի հասնելու: Իրավիճակը դառնում է այնպիսին, որ իշխանութեան համար իրական խնդիրը սկսում է Մայիսի 12-ից յետոյ, մինչդեռ հասարակութեանը եւ քաղաքական դաշտի մի գալի հատուածի թւում էր, թէ հենց Մայիսի 12-ն է լինելու խնդիր իշխանութեան համար:

Նման բարդ եւ պատասխանատու պահին ելքը կարող է լինել ոչ սովորական, իւրայատուկ լուծում գտնելը: Հայաստանի իշխանութիւնը դրանով երբեք աչքի չի ընկել: Միշտ էլ վերնախաւը առաջնորդուել է պարզ լուծումներով՝ յատուկ ջոկատայիններ, մահակ, ջրցան մեքենայ, լցոնումներ, ընտրակաշառք: Սակայն սա այն դէպքն է, երբ գործ ունես իւրաքանչեւ հետ: Այսինքն վերը նշուած «պարզ լուծումներն» ուղղակի անհնար է կիրառել իւրաքանչեւ հանդէպ, քանի որ նրանք կարող են եւ նեղանալ, վատ գալ, վիրաւորուել ու չգալ Նոր Տարին շնորհաւորելու: Նրանց հարցը պէտք է լուծել օրիգինալ որոշումով: Մայիսի 12-ին դա չյաջողուեց: Իշխանութիւնը ստիպուած էր բոլոր իւրաքանչեւներին բաւարարել եւ տեղ տալ խորհրդարանում: Բայց խորհրդարանի տեղերը անհամեմատ աւելի շատ են, քան այն պաշտօնները, որ պէտք է բաժանուեն: Հետեւաբար նոյն յաջողութիւնը կրկինը գործնականում լինելու է անհնար: Ինչպիսին կը լինեն հետեւանքները՝ դժուար է կանխատեսել: Յամենայն դէպս, շատ բարդ է լինելու բացատրել որոշ մարդկանց, թէ ինչու ասենք այս կամ այն պաշտօնը ոչ թէ իրենց հասաւ, այլ հասաւ մէկ ուրիշին: Այդ մարդկանց ընդհանրապէս որեւէ բան բացատրելն է դժուար, իսկ պաշտօն չհասնելը բացատրելը՝ գործնականում անհնարին: Այդպիսով իշխանական վերնախաւի երկու թեւում էլ կարող է առաջանալ չբացատրուած իւրաքանչեւի մի հոծ բազմութիւն, որն էլ բնօրէն ոչնչով չի գիշի խելագարուած ամբողջներին: Իսկ խելագարուած ամբողջները, ինչպէս յայտնի է, ինչեր ասես, որ չեն անի:

Կայ թերեւս խնդրի օրիգինալ, կամ ոչ ստանդարտ լուծման երկու

ուղիներ: Կամ շտապ կարգով պէտք է աւելացնել պաշտօնների քանակը եւ այն հաւասարացնել իւրաքանչեւի քանակին, եւ նոյնիսկ անցնել մէկ երկու պաշտօնով՝ չգիտես, թէ կեանքը էլ ինչ իւրաքանչեւ կը մատուցի: Կամ պաշտօն շտապ որեւէ իւրաքանչեւ: Այդ դէպքում կարիք էլ չի լինի բացատրել, թէ ինչու չտրուեց: Եթէ նրանք տեսնեն, որ իրենցից ոչ ոք չստացաւ պաշտօն, ապա այլեւս նրանցից որեւէ մէկի մօտ հարց չի առաջանայ, թէ ինչու ինքը չստացաւ: Սերժ Սարգսեանը կարծես թէ գնում է այդ ճանապարհով: ՀՀ հետ բացարձակ մեծամասնութիւն ունենալով, նա փաստօրէն պաշտօններ է առաջարկում ոչ հանրապետականներին: Իհարկէ, որոշ լծակներ մնալու են ՀՀ ձեռքին, բայց եթէ ժամանակի ընթացքում Սերժ Սարգսեանը հասնի մտածողութեան կատարելութեան եւ ամբողջութեամբ բաժանի պաշտօններն օտարներին, ապա նա այլեւս որեւէ խնդիր չի ունենայ իւրաքանչեւի հետ: Իսկ դա շատ կարեւոր է, քանի որ Հայաստանի իշխանութիւնը տիրապետում է օտարների նկատմամբ արդիւնաւէտութիւն ունեցող լուծումների: Իւրաքանչեւը իշխանութեան թոյլ տեղն է: Սերժ Սարգսեանը փաստօրէն գնում է այդ տեղը յաղթահարելու ճանապարհով: Զարմանալի է միայն, որ նրա հետեւից է գնում նաեւ Ռոբերդ Քոչարեանը: Նա որջուում է պաշտօնները բաժանելու Սարգսեանի նախաձեռնութիւնը: Նախագահը թերեւս ցանկանում է դրանով ցոյց տալ, որ իրականում ինքն է պաշտօններ բաժանողը, ինչը նոյնն է, թէ նա ցանկանում է իւրաքանչեւին ինչ որ բան բացատրել: Մինչդեռ ստացուում է մի վիճակ, երբ Սերժ Սարգսեանը գործում է, իսկ Ռոբերդ Քոչարեանին ընդամենը թողնում է իր գործողութիւնները բացատրելու գործը:

**ՅԱԿՈՒ ԲԱՆԱԼԵԱՆ**  
«ԼՐԱԳԻՐ ԿԱՅՔ ԷՁ»

**ԶԱՐՄԱՆՔ**

Ժամանակին Աժ պատգամաւոր ՍԱՄՈՒԷԼ ԲԱԼԱՍԱՆԵԱՆԸ յայտարարել էր. «Իմ ճակատին գրուած է ՕԵԿ, ես 52 տարի ապրել եմ եւ ճիշդ եմ ապրել, ես երկու տղայ երեխայ ունեմ, որ նոր կեանք են մտնելու, նրանց չեն ասի՞. «Բա էս հերթ ի՞նչ կատարեց»»: Եւ հաս, ի զարմանալ բոլորի, ընտրութիւնները ից յետոյ Սամուէլ Բալասանեանը դուրս եկաւ ՕԵԿ-ից՝ բերելով առաւել քան զարմանալի պատճառաբանութիւն. «Արդիւնաւէտ գործելու համար որոշել եմ լինել անկախ պատգամաւոր: Պարզապէս հնարաւոր է ՕԵԿ-ի անդամ մնալ եւ դա բացառապէս միայն վերջերս»: Զարմանալով հանդերձ՝ մնում է հարցադրել. իսկ հիմա՞ ինչ է գրուած Սամուէլ Բալասանեանի ճակատին, եւ ինչու նա չի ասում իր արարքի իրական պատճառները:

Դրական առումով մեզ զարմացրեց «ժառանգութիւն» կուսակցութեան համամասնական ցուցակի 6-րդ հորիզոնականը զբաղեցնող ՀԵՆՐԻԿ ԲԱՆՉԻՆԵԱՆԸ՝ հրաժարուելով պատգամաւորական մանդատից. «Ես թանգարանի տնօրէն եմ շուրջ 15 տարի եւ երկարաժամկէտ ծրարներ ունեմ, որոնք պատրաստուում եմ իրականացնել»: Անշուշտ, զարմանալի է, որ Հայաստանում դեռ կան մարդիկ,

**ԾՈՒՌ ՆՊԱՏԱԿՆԵՐ**

Վերջերս ելույթ ունենալով հեռուստատեսութեամբ՝ շատ հեղինակաւոր մի պատմաբան համոզմունք յայտնեց, որ մեր պատմագիտութիւնը «պէտք է ծառայեցնել» մեր ազգային նպատակներին: Վստահ չեմ, որ ճիշդ եմ հասկացել գիտնականին, բայց սովորաբար երբ այդպիսի բաներ են ասում, նկատի ունեն հետեւեալը. «Գտնեք մեր պատմութեան մէջ այնպիսի փաստեր, որոնք բնութագրում են մեր ազգը որպէս ազնիւ, արդար, հինաւուրց եւ քաղաքակիրթ, իսկ այն ազգերը, որոնց հետ խնդիրներ ունէինք կամ ունենք՝ որպէս նենգ, դաժան, քոչուր եւ վայրենի: Դրանից յետոյ այդ մեր «ազգային» պատմագիտութիւնը ներկայացնեք աշխարհին՝ ասելով. «Տեսէք, մենք ինչ լաւն ենք, իսկ մնացածը՝ վատը, հետեւաբար՝ դուք մեզ պէտք է բարի աչքով նայէք, իսկ նրանց՝ խոժոռ»: Ի դէպ, ճիշդ այդպիսի «ազգային նպատակներ» են դնում բոլոր արդիւնաւէտ պատմաբանները՝ միայն «լաւի» եւ «վատի» տեղերն են փոխում:

Մինչդեռ ցանկացած գիտութիւն, ենթադրում եմ, պիտի ծառայի միայն մէկ նպատակի՝ ճշմարտութեան որոնմանը եւ բացառապէս միայն միայն վերջինիս հաճելի կամ տհաճ լինելուց: Եւ այդ առումով պատմագիտութիւնը ոչնչով չի տարբերուում, ասենք, մաթեմատիկայից: Հակառակ դէպքում ստացում է այն, ինչին ականատես էինք մի քանի տասնամեակ առաջ: Տարբերութիւնը տերմինների մէջ է. այն ժամանակուայ «միակ ճիշդ» կոմունիստական գաղափարախօսութիւնը», որին ամէն ինչ ծառայեցնում էր, այսօր փոխարինում է դարձեալ ինչ-որ մարդկանց խմբի կողմից կամայականօրէն ձեւակերպուած «ազգային շահերով»:

Ընդհանրապէս, հասարակական եւ, առաւել եւս՝ քաղաքական կեանքում կարծես թէ մոլուցք կայ

ցանկացած բան անպայման ինչ-որ մի այլ՝ դրա հետ կապ չունեցող բանի ծառայեցնելու: Օրինակ, իշխանութիւնը (այո՛, իշխանութիւնը, ուրիշի վրայ պէտք է մեղքը գցել) ընտրութիւններ է անցկացնում: Դրա նպատակը, հաւանաբար, պէտք է լինի ժողովրդի քուէով իշխանութեան մարմինների ձեւաւորումը: Հայաստանում այդ պարզ նպատակը փոխարինում է բոլորովին այլ նպատակով: Ընտրութիւններն արդէն 12 տարի ծառայեցնում են մի բանի. իշխանութեան վերարտադրմանը: Այդ ոչ ուղիղ, կարելի է ասել՝ «ծուռ» նպատակն իրականացնելու համար իշխանաւորները մտնում են բոլոր հնարաւոր եւ անհնարին մեղքերի տակ՝ կարծես աշխարհի վերջն է գալու, եթէ նրանք չիշխեն: Գուցէ նրանց համար գալու է:

Ընդդիմադիրներն էլ համոզուած են, որ ՀՀ բոլոր քաղաքացիների ամէն մի քայլը եւ ամէն մի շունչը պէտք է ծառայեցնուի մէկ նպատակի՝ իշխանափոխութեանը: Այսինքն՝ եթէ դուք, ասենք, պատէք շարում կամ հաց էք թխում, ամէն մի քարը դնելիս եւ ամէն մի բոքոնը վառարանից հանելիս պէտք է մտածէք՝ ինչպէս ազատուել յանցաւոր վարչախմբից եւ իշխանութեան բերել (ենթադրաբար) ոչ յանցաւոր վարչախմբին: Այդպէս չի լինում. հացթուխը պիտի հաց թխի, պատշարը՝ պատ շարի, եւ այդ գործունէութիւնը չծառայեցնի որեւէ այլ նպատակի: Հենց այդ տեսակի գործունէութիւնն էլ նպատակը բերի ազգային շահերին: Այս անգամ՝ առանց չակերտների:

**ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ**  
«ԱՌԱԻՕՏ»

**ՄԱՍԻՍ** ՇԱԲԱԹԱԹԵՐԹ՝  
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՍԲԱԳԻՐ՝  
ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ՊԱՉԱՆԵԱՆ  
ԽՍԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ  
ՍԱՅԱԿ ԹՈՒԹԵԱՆ  
ՎԱԶԳԷՆ ԽՈՍԱՆԵԱՆ  
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ

Ֆեռ. (626) 797-7680  
Ֆաքս. (626) 797- 6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail)  
Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.  
Periodicals Postage Paid at Pasadena CA.

Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104

որոնց պատրաստ են յանուն սիրելի գործի հրաժարուել պատգամաւորական մանդատից՝ այդ մանդատի բերած բոլոր բարիքներով հանդերձ, եւ կոնկրետ այս դէպքում Բախչինեանի որոշումից Զարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարանը հաստատ շահելու է:

Սակայն Հայաստանում քիչ չեն նաեւ տրամադծօրէն հակառակ մտեցումները: Այսպէս՝ կրթութեան եւ գիտութեան նախարար ԼԵՒՈՆ ՄԿՐՏՉԵԱՆԻՆ շատ է դուր եկել նախարար աշխատելը, եւ նա վերջերս յայտարարել է բառիս բուն իմաստով հետեւեալը. «Ինքս ցանկութիւն ունեմ աշխատելու, սակայն կախուած է կուսակցութեան որոշումից: Եթէ Դաշնակցութիւնը որոշի կոալիցիայի մաս կազմել եւ յարմար գտնի, կ'աշխատեմ»: Մնում է զարմանալ, թէ ինչպէս այդ գործիչը հրապարակաւ գրեթէ ճշում է. «Յարգելի կուսակիցներ, պորտֆելներից մի հրաժարուէ՛ք եւ անպայման մի պորտֆելն էլ ինձ տուէ՛ք»: Այսինքն՝ ստացում է, որ Լեւոն Մկրտչեանը համեստութեամբ հաստատ չի տառապում:

Իսկականից զարմացած է

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱԼԱՋԵԱՆԸ**  
«ԻՍԿԱԿԱՆ ԻՐԱԻՈՒՆՔ»



ԼՈՒՐԵՐ

«ՎԵՐԱՑՐԷՔ ԱՆՊԱՏԺԵԼԻՈՒԹԵԱՆ ՄԹՆՈԼՈՐՏԸ»

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: 2007թ-ի Մայիսի 28-ի գիշերը ժամը 02:30 - 03:00 սահմաններում իրականացուեց է ահաբեկչու թիւ 31 ընտրատարած քուժ ԱԺ պատգամաւորութեան թեկնածու առաջադրուած Լ. Փարեմուզեանի նկատմամբ: Փորձել են հրդեհել նրա բնակարանը: Դէպքը կատարուել է աջն բանից յետոյ, երբ Լ. Փարեմուզեանը թիւ 31 ընտրատարած քուժ ընտրախախտումների վերաբերեալ (ընտրութիւնների արդիւնքում յաղթող է ճանաչուել ՀՀԿ-ի կողմից առաջադրուած Կարէն Սարիբէգեանը) հաղորդում է ներկայացրել Լոռու մարզի դատախազութիւն, «Առաւօտ» թերթի 2007թ. Մայիսի 18-ի «Միայն մէկ ընտրատարած քուժ՝ 3807 + 2852 անճշդութիւն» վերտաւուութեամբ յօդուածի շուրջ:



Լ. Փարեմուզեանի տան մուտքը

Հանրապետութիւնում ձեւաւորուած վարի եւ անպատժելիութեան մթնոլորտի տրամաբանութեան մէջ եւ նպատակ ունի ամրապնդել նման մթնոլորտի ձեւաւորումը նաեւ ընտրական խախտումների դէմ պայքարողների նկատմամբ:

Գտնուած ենք, որ ՀՀ իրաւապահ մարմինները լիովին պատասխանատուութիւն են կրում ոչ միայն ահաբեկչութիւնը կատարած, այլեւ գործողութիւնը կազմակերպած եւ հրահրած անձանց բացառապէս համար:

Պահանջում ենք, որ իրաւապահ մարմինները բոլոր միջոցները ձեռք կ'առնեն ապահովելու ոչ միայն Լ. Փարեմուզեան անձի անվտանգութիւնը, այլեւ կանխելու վարի մթնոլորտը եւ ազատ խօսքի նկատմամբ ահաբեկչութիւնը:

Առանց կարծիքի արտայայտման ազատութեան իրական երաշխիքների եւ իրաւապահ մարմինների կողմից անպատժելիութեան մթնոլորտի վերացման անհնար է պատկերացնել ժողովրդավարութեան ձեւաւորումը եւ իրաւական պետութեան կայացումը:

Ահաբեկչութեան փաստից երեք օր առաջ Լ. Փարեմուզեանը եւ թիւ 31 ընտրատարած քայլին յանձնաժողովի նախագահ Վ. Վանեանը Լոռու մարզի դատախազութիւնում բացատրութիւն են տուել հաղորդման վերաբերեալ: Լ. Փարեմուզեանը վերստին պնդել է իր հաղորդման մէջ ներկայացրած պահանջը: Այն է՝ ստուգել տեղամասերի արդիւնքները եւ վերանայել ընտրութեան արդիւնքները:

Քանի որ Լ. Փարեմուզեանը բացի հասարակական, քաղաքական գործունէութիւնից որեւէ այլ գործունէութեամբ չի զբաղուել եւ չունի անձնական բնօրինակի այլ ինքնօրինակներ այլ մարդկանց հետ, տեղի ունեցածը ուղղակիօրէն գնահատուած ենք որպէս միայն ընտրական կեղծիքների բացառապէս ուղղութեամբ ԱԺ պատգամաւորութեան նախկին թեկնածուի գործողութիւնների նկատմամբ ահաբեկչութիւն:

Իրականացուած ահաբեկչական գործողութիւնը տեղաւորում է

«ԱՐՅՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ԶԻ ԿԱՐՈՂ ԶԱՐԶԱԳԱՆՔԵԼ»

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Գերագոյն խորհուրդը ակումբի աջակցութեամբ «Նոր ժամանակներ» կուսակցութիւնը մայիսի 12-ի ընտրութիւնների արդիւնքները պատրաստուած է վիճարկել Սահմանադրական Դատարանում: Ռուբէն Թորոսեանի եւ Արամ Կարապետեանի համատեղ դիմումը կազմել է 230 էջ : Բացի արձանագրած խախտումներից «Նոր ժամանակներ» կուսակցութիւնն Մայիս 30-ին ներկայացրեց այն միջնորդագիրը, որը պատրաստուած է ներկայացնել ՄԴ:

ՆԺԿ-ի միջնորդագիրը պահանջում է բացել 687 ընտանեկանների արկղերն ու ուսումնասիրել ընտրատեղամասերի փաստաթղթերի փաթեթները: Արամ Կարապետեանը վստահ է, որ իրենց ունեցած փաստերը հիմնաւոր են. «ՄԴ-ն չի կարող դրանց որեւէ ձեւով չարձագանքել: Եղել են մեծ կեղծիքներ եւ լուրջ չարաշահումներ: Եթէ ՄԴ անաչառ լինի՝ ընտրութիւնների արդիւնքները պէտք է անվաւեր ճանաչուեն»: ՆԺԿ նախագահը վստահ է, որ առնուազն կեղծուել է 400 հազար ձայն:

Մայիսի 12-ի ընտրութիւնների արդիւնքները ՄԴ-ում վիճակում են նաեւ «Հանրապետութիւնը», «Օրինաց երկիրը» եւ «Իմպիչմենտ» դաշինքը: Բոլոր չորս դիմումները ՄԴ-ն լսելու է մէկ գործով: Ի դէպ, այսօր Արամ Կարապետեանը լրագրողներին երկու քուէ-րաթերթիկի ցոյց տուեց, որոնք նախապէս ստորագրուած էին եւ քուէ-

րակուած, սակայն քուէատուկի այդպէս էլ չէին հասել: Նա նաեւ խոստացաւ կեղծ անձնագիր ցոյց տալ. «Այս պահին այդ անձնագիրը ուսումնասիրուած է», - ասաց նա: Յայտարարելով, որ ընտրութիւնների արդիւնքներից գոհ է միայն ՀՀԿ-ն, միւսներին նա կոչ արեց. «Պայքարի մէջ չեն նւնուում»: ՆԺԿ նախագահը պատրաստուած է 2008թ.-ի նախագահի ընտրութիւններին:

Մայիս 30-ին, ասուլիսի ընթացքում նա վստահեցրեց, որ փաստաթղթերի հետ կապուած որեւէ խնդիր չունի 1992թ.-ից հաշուառուած է ՀՀ-ում, երբեք այլ երկրի քաղաքացիութիւն ստանալու դիմում չի ներկայացրել եւ չի ներկայացնի: Այս պահից սկսած Արամ Կարապետեանն արդեն վստահ է, որ 2008թ.-ի նախագահի ընտրութիւններն ընթանալու են երկու փուլով: Նա որեւէ ողբերգութիւն չի տեսնում, որ առաջին փուլի ընթացքում ընդդիմութիւնն ընտրութիւններին չի մասնակցի մէկ միասնական թեկնածուով. «Դա աւելի շատ իշխանութիւնների մտահոգութիւնն է: Այսօր իշխանութիւնն էլ մէկ թեկնածուով մասնակցելու խնդիր ունի: Դա շատ վատ է, որովհետեւ ժողովուրդը պէտք է յստակ իմանայ, թէ ամէն ինչի համար ով է մեղաւորը»: Ինչ վերաբերուած է ընդդիմութեանը, ապա Արամ Կարապետեանը վստահ է, որ երկրորդ փուլի ընթացքում բոլոր իրական ընդդիմադիրները կը միաւորուեն մէկ թեկնածուի շուրջ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ՝ «ՍԱ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԵՏԱՊՆԴՈՒՄ Է»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Հայաստանի նախկին արտգործնախարար, «Քաղաքացիական անհնազանդութիւն» շարժման ղեկավար Ալեքսանդր Արզումանեանը, ով կալանուած է «փողերի լուացման» մեղադրանքով, այսօր ասաց «Ազատութիւն» ռադիոկայանին, որ իր դէմ քաղաքական հետապնդում է իրականացուած:



Ալեքսանդր Արզումանեան

«Որեւէ արարք ես չեմ գործել, որը կարող է յանկարծ կոնֆլիկտի մէջ մտնել օրէնքի հետ: Սա քաղաքական հետապնդում է», - կարծիք յայտնեց Ալեքսանդր Արզումանեանը, որը Մայիսի 8-ից գտնուած է «Երեւան կենտրոն» քրէակատարողական հիմնարկում:

«Իմ բոլոր շփոթմանը վկայում են, որ ես հրահանգով եմ այտուեղ», - ասաց Արզումանեանը, յիշատակելով նախագահ Ռոբերտ Քոչարեանի եւ վարչապետ Սերժ Սարգսեանի անունները:

«Այս 20 օրերի ընթացքում, որ ես այտուեղ եմ, որեւէ գործողութիւն չի արուել: Ուղղակի մեկուսացուել եմ: Երեւի իրենք էլ են հասկացել, որ ոչ մի փաստ չունեն: Սա արտառոց

«ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ ՈՒԶՈՒՄ Է ՄԻ ՓՈՒԼՈՎ ԴԱՌՆԱԼ ՆԱԽԱԳԱՐ»

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Ովքեր նախագահական ընտրութիւններին քուէարկելու են Սերժ Սարգսեանի համար, նրանք քուէարկելու են պատերազմի համար», - այսօր «Փաստարկ» ակումբում յայտարարեց Ազգային ժողովրդավարական միութեան նախագահ Վազգէն Մանուկեանը, որը պատրաստուած է առաջադրել իր թեկնածութիւնը Նախագահի ընտրութիւններում: Եթէ 2008թ. Սերժ Սարգսեանը դառնայ նախագահ, ապա Հայաստանում կը լինի այնպիսի մոնոպոլ իշխանութիւն, որ դեռ չի եղել. «Կը լինի այս նոյն վիճակի շարունակութիւնը. նոյն ձեւի կեղծիքներ, նոյն կոռուպցիան»: Հայաստանը տանուլ կը տայ Անդրկովկասում. «Ատրպէյճանում կայ Ալիեւ, որը ծնուել է թագաւորի ընտանիքում եւ աւարտել է ՄԳԻՄՕ, բազմաթիւ կապեր ունի, Վրաստանում Սահակաշվիլին է, որը միջազգային կապեր ունի, միջազգային կրթութիւն է ստացել, իսկ Հայաստանում՝ երեկոյան բանասիրական աւարտած Սերժ Սարգսեան: Իրենք իրար հետ բանակցութիւններ են վարելու»: Իրար հաւասար են զգալու: Անհեթեթութիւն է, ինչն էլ կը բերի պատերազմի»:

Ըստ ԱԺՄ նախագահի, Սերժ Սարգսեանի յաղթանակը երաշխաւորուած կը լինի այն դէպքում, եթէ նրա «խորամանկութիւնը» աշխատի: ՀՀԿ-ն, որը մեծամասնութիւն է ձեւաւորել ԱԺ-ում, դասական քաղաքականութեան տեսակետից կարող է ձեւաւորել միանման կառավարութիւն, սակայն այսօր պորտֆեյներ է առաջարկում այլ կուսակ-

ցութիւնների: Իսկ նպատակը, ըստ նրա մէկն է. «Ամէն ինչ անելու են, որ նախագահականի ժամանակ մէկ փուլից յաղթեն»:

Իսկ դրա համար հարկաւոր են ԲՀԿ-ի, ՀՅԴ-ի, դրսից ՄԱԿ-ի ձայները: «Հասկանալի է Սերժ Սարգսեանի խորամանկութիւնը, հասկանալի չի այն կուսակցութիւնների «նայելովութիւնը», որոնք մտնում են այդ խաղի մէջ», - ասում է Վազգէն Մանուկեանը: Իսկ «նայելովութիւն» է համարում, քանի որ Փետրուարին նախագահական ընտրութիւններից յետոյ կրկին ձեւաւորուելու է նոր կառավարութիւն: ԱԺՄ նախագահի համոզմամբ, մնացած բոլոր խորհրդարանական կուսակցութիւնները պէտք է իրենց յայտարարեն ընդդիմադիր, չվերջնեն որեւէ նախարարական պորտֆեյլ, ստեղծեն հզօր եւ ուժեղ ընդդիմադիր կալիքիւն ընդդէմ ՀՀԿ-ի:

Ինչ վերաբերում է ընդդիմութեանը, ապա Վազգէն Մանուկեանի կարծիքով՝ եթէ հանդէս չգան միասնական մէկ թեկնածուով, չեն յաղթի: Իսկ որպէս միասնական թեկնածու այսօր Վազգէն Մանուկեանը տեսնում է միայն իրեն, սակայն ասաց, «որ անպատեղի իրավիճակում, երկրի փրկութեան համար պատրաստ է նաեւ զիջել»:

Ի դէպ, ԱԺՄ առաջնորդը կարծում է, որ ընդդիմութիւնը, ԱԺ ընտրութիւնները Սահմանադրական դատարանում բողոքարկելով՝ արդիւնքի չի հասնի, բայց միեւնոյն ժամանակ՝ ողջունում է նրանց քայլը. «Ճիշդ են անում, չի կարելի անպատասխան թողնել»:

ԲԱՅՈՒԵՑ «ԶՈՒՄԹՆՈՅ» ՕԴԱԿԱՅԱՆԻ ՆՈՐ ՈՒՂԵՒՈՐԱՅԻՆ ՅԱՄԱԼԻՐԸ

Ուրբաթ, Մայիս 25-ին օրը Երեւանի «Զուարթնոց» օդակայանում բացուեց նոր ուղեւորային համալիրը:

American International Airports ընկերութեան նախագահ էդուարդօ Էռնեկեանը ասաց, որ այս «օդակայանը լաւագոյնն է տարածաշրջանում»: Նրա վկայութեամբ՝ նոր համալիրի շինարարութեան վրայ ծախսուել է մօտ 100 միլիոն տոլար: «Սա առաջին փուլն է: Շինարարութիւնն ամբողջութեամբ կ'աւարտուի 2010 թուականին, եւ ներդրումների ծաւալը կը հասնի 200 միլիոնի», - ասաց Էռնեկեանը:

Նոր ուղեւորային համալիրը օրհնեց Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը:



ԼՈՒՐԵՐ

ԴԵՆԻՆԵԼ ՖՐԻԴ. «ԱՄՆ-Ը ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ՍԻԱՍԻՆ ԱՇԽԱՏՈՒՄ ԵՆ ԴԱՐԱԲԱՂԻ ՅԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂՈՒԹԵԱՄԲ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:  
Լեոնային Ղարաբաղի հակամարտության կարգաւորման ուղղութեամբ Միացեալ Նահանգները եւ Ռուսաստանը միասին աշխատում են՝ ձգտելով դիւրացնել խնդրի լուծումը: Այս մասին յայտարարել է ԱՄՆ-ի պետքարտուղարի Եւրոպայի եւ Եւրասիայի հարցերով տեղակալ Դենիել Ֆրիդը:



ԱՄՆ-ի պետքարտուղարի Եւրոպայի եւ Եւրասիայի հարցերով տեղակալ Դենիել Ֆրիդը

Ուաշինգտոնում հանդէս գալով Հեյտինկեան յանձնաժողովի նախաձեռնած՝ «Ռուսաստանն այսօր» թեմայով քննարկումներում, Ֆրիդը ասել է. - «ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահող երկրներ Ռուսաստանի եւ Ֆրանսիայի իմ գործընկերների հետ անցած տարուալ գարնանը ես այցելել էի տարածաշրջան՝ խաղաղ գործընթացը առաջ մղելու նպատակով Ատրպէյճանի եւ Հայաստանի նախագահներին ներկայացնելու խաղաղ կարգաւորման առաջարկուող հիմնարար սկզբունքները: Այսօր էլ այդ սկզբունքները մնում են երկու կողմերի միջեւ բանակցութիւնների առանցքում»:

«Ընդունելով հանդերձ, որ հակամարտութեանը լուծում տա-

լու բեռը ընկնում է Հայաստանի եւ Ատրպէյճանի վրայ, մենք, այդուհանդերձ, շարունակում ենք ցոյց տալ, որ Միացեալ Նահանգները եւ Ռուսաստանը կարող են աշխատել միասին՝ դիւրացնելու խաղաղ գործընթացը, որը կարող է ամրապնդել կայունութիւնը եւ անվտանգութիւնը Հարաւային Կովկասում, ինչը լաւագոյնս համապատասխանում է մեր երկկողմ շահերին», - ամփոփել է պետքարտուղարի տեղակալը:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԲԱՐԵՎԱՄՆԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ ԶԲԱՂԵՑՆՈՒՄ Է 7-ՐԴ ՏԵՂԸ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:  
Վրաստանի բնակիչների շրջանում «Ջորջիան Քոնսալթինգ Գրուպ» խորհրդատուական ընկերութեան անցկացրած հարցախոյզի արդիւնքներով, Վրաստանի բարեկամ երկրների տասնեակում Հայաստանը զբաղեցնում է 7-րդ տեղը. Հայաստանը բարեկամ երկիր է համարել հարցուած վրացիների 4 տոկոսը:

Առաջին եւ երկրորդ տեղերը 12-ական տոկոսով զբաղեցրել են Ատրպէյճանը եւ Ուկրաինան: Երրորդ եւ չորրորդ տեղերում են 10-ական տոկոս ստացած Ամերիկայի Միացեալ Նահանգները եւ Էստոնիան: Հինգերորդ տեղում Թուրքիան է՝ 8 տոկոս, վեցերորդը Գերմանիան է՝ 6 տոկոս: Լեհաստանը եւ Ղազախստանը 3-ական տոկոսով գրաւել են 8-9-րդ տեղերը, իսկ տասնեակը եզրափակում է Թուրքմենստանը:

day.az ինտերնետային պարբերականը նշում է, որ ընդհանուր հաշուով 50 երկիր է ընդգրկուել Վրաստանի բարեկամների ցանկում:

Ռուսաստանը բարեկամ է համարել հարցուածների ընդամենը 1 տոկոսը, իսկ 56 տոկոսի կարծիքով՝ Ռուսաստանն առաջինն է Վրաստանի նկատմամբ անբարեհաճ տրամադրուած երկրների թւում: Հարցուածների 20 տոկոսի կարծիքով, պատճառը Ռուսաստանի կայսերական քաղաքականութիւնն է, 18 տոկոսը համոզուած է, որ դրանում մեղաւոր է նախագահ Վլադիմիր Պուտինը, 14 տոկոսը նշել է, որ Ռուսաստանը Աբխազիայի եւ Հարաւային Օսիայի պատճառով չի հաշտուում Վրաստանի հետ:

Հարցուածների 31 տոկոսի համոզմամբ, Վրաստանը թշնամի երկիր չունի:

ՍԴՅԿ ՀԱՅ-ԱՄԵՐԻԿԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԲՈՂՈՔԻ ՆԱՄԱԿ ՅՂԱԾ Է ԵԱՀԿ-Ի ՂԵՎԱՎԱՐՈՒԹԵԱՆ

Շարունակուած էջ 1-էն

ղակի հարուած էր Հայաստանի ժողովուրդի արժանապատուութեան եւ ձգտումներուն»:

Շարունակելով, ՀԱԽ-ի նամակը կը յայտնէ թէ, աւելի նուազ չափանիշեր որդեգրելով դիտորդները կանաչ լոյս տուած եղան Հայաստանի կառավարութեան, որպէսզի անոնք շարունակեն կեղծել ընտրութիւններու արդիւնքները եւ անտեսեն ժողովուրդի կամքը:

Ապա նամակը կը յայտնէ, - «Մենք կը հաւատանք որ Հայաստանի քաղաքացիները արժանի են

արդար եւ թափանցիկ ընտրութիւններու, որոնք պիտի արտադրեն ներկայացուցչական մարմին մը, որ իսկապէս կը ներկայացնէ ժողովուրդը: Մենք նաեւ կը հաւատանք, որ ձեր կազմակերպութիւնը խիստ կարեւոր դեր կը կատարէ Հայաստանի նման երկիրներու մէջ ժողովրդավարութեան զարգացման ուղղութեամբ»:

Եզրակացնելով Հայ Ամերիկեան Խորհուրդը լոյս կը յայտնէ, որ ԵԱՀԿ-ի վերջնական եզրակացութիւնը հեռու մնալով քաղաքական նկատարումներէ, կ'ըլլայ շատ աւելի ամբողջական եւ կ'արտացոլացնէ իսկական փաստերը:

«ՆԱԽԱԳԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԵՂԾԵԼԸ ՍԱՅ Է ԼՂՅ-Ի ՅԱՄԱՐ»

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»:  
«Հայաստանում կարող են ասել՝ ով կեղծել է ընտրութիւնները, նա դաւաճան է եւ անցնել առաջ, սակայն ԼՂՅ-ում իւրաքանչիւր չինովնիկ գիտակցում է եւ իր վրայ չի վերցնի ընտրութիւնները կեղծելու պատասխանատուութիւնը, որովհետեւ նրան ասելու են՝ դու կործանեցիր մեր երկիրը:

ԼՂՅ նախագահի ընտրութիւնները կեղծելը մահ է երկրի համար», - այսօր իր տեսակէտը յայտնեց ԼՂՅ նախագահի նախկին խորհրդական, քաղաքագէտ Մանուէլ Սարգսեանը: Խօսելով ԼՂՅ-ի համար ընտրուած նախագահ ունենալու կարեւորութեան մասին՝ նա յիշեցրեց. «1991թ.-ին շարժումը ԼՂՅ-ում մօտ մէկ տասնեակ լիդերներ էր ծնել, սակայն շատ էական էր, որ նրանք բոլորը համաձայնութեան եկան, եւ ժողովրդի կողմից ընտրուեց Արթուր Մկրտչեանը: Չճանաչուած երկրի նախագահին անմիջապէս այցելեցին աշխարհի տարբեր երկրների ներկայացուցիչներ»:

Այսօր ԼՂՅ նախագահի ընտրութիւններում առաջադրուած 5 թեկնածուներից 3-ը, ըստ նրա, ձեւական բնոյթ են կրում: Պայքարը հիմնականում ընթանալու է երկուսի՝ ԼՂՅ ԱԱԾ պետ Բակո

Սահակեանի եւ ԱԳ փոխնախարար Մասիս Մայիլեանի միջեւ: Վերջինի թեկնածութեան առաջադրմամբ ԼՂՅ իշխանութիւններն առանձնապէս ոգեւորուած չեն, եւ ԼՂՅ խորհրդարանի բոլոր ուժերը պաշտպանում են Բակո Սահակեանին:

Մայիլեանի առաջադրումը ողջունում է քաղաքագէտ Մանուէլ Սարգսեանը. «Դա յոյս է ներշնչում, որ առաջին անգամ ԼՂՅ-ում կարող են անցկացնել ընտրութիւններ եւ արձանագրել ոչ թէ 95 տոկոս յաղթանակ, այլ 51ին» (ինչպէս գործող նախագահի դէպքում խմբ) Ըստ նրա. «Ի տարբերութիւն ՀՀ-ի ԼՂՅ-ում իշխանութեան եւ հասարակութեան միջեւ գոյութիւն չունի ջրբաժան»:

2004թ. Ստեփանակերտի քաղաքապետի ընտրութիւնները ապացուցեցին, որ հասարակութիւնը ի վիճակի է մասնակցել եւ ազդել ընտրական գործընթացների վրայ»: Քաղաքագէտի կարծիքով, եթէ ԼՂՅ նախագահին չընտրի բնակչութիւնը, ապա ընտրութիւնները անմիջապէս կ'ազդեն ԼՂ բանակցութիւնների ձեւաչափի վրայ. «Խնդիրը անձերը չեն, այլ ընտրական մեխանիզմը: Թող Բակո Սահակեանը դառնայ ԼՂՅ նախագահ, բայց ընտրութիւնների արդիւնքում»:

ՆԱՏՕ-ԻՑ ՊԵՏՔ Է ԶԳՈՒՇԱՆԱԼ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»:  
«Խորհրդային Միութեան փլուզումից յետոյ դժուար էր հասկանալ, թէ ինչի համար է ՆԱՏՕ-ն», - «Համաձայնութիւն» կենտրոնի կազմակերպած «ՆԱՏՕ-ն եւ Հարաւային Կովկասը» սեմինարի ընթացքում ասաց ՀՀ առաջին նախագահի տնտեսական հարցերով խորհրդական Ժիրայր Լիպարիտեանը: Նա կարծում է, որ ՆԱՏՕ-ն ոչ միայն ռազմաքաղաքական կառույց է, այլ նախեւառաջ ԱՄՆ-ի հիմնական գործիքը: Իսկ ԱՄՆ-ն այսօր բաւականին լուրջ խնդիրներ ունի այն պարագայում, երբ աշխարհում փոխուած է Ռուսաստանի, Չինաստանի, Հնդկաստանի դերը: «ԱՄՆ-ն դեռ չի որոշել իր կարգավիճակը՝ լինելու է հեգեմոն իմպերիա՞, թէ՞ կ'ընդունի բազմաբեւեռ միջազգային սիստեմը: Ապագայի հանդէպ անորոշութեան, ընդհանրապէս աշխարհի հետ յարաբերութիւններ ճշդելու անհրաժեշտութիւն ունի ԱՄՆ-ն: Իսկ ԱՄՆ-ն ՆԱՏՕ-ի շարժիչ ուժն է», - յիշեցրեց Ժիրայր Լիպարիտեանը եւ աւելացրեց, որ ԱՄՆ-ն այսօր հակահիթուային սարքաւորումներ է տեղադրում Լեհաստանում եւ Չեխիայում այդ երկրների հետ երկկողմ յարաբերութիւնների շրջանակում՝ առանց ՆԱՏՕ-ի. «Այսինքն, ԱՄՆ-ն էլ ՆԱՏՕ-ին մի կողմ է գցում»:

Ժիրայր Լիպարիտեանի կարծիքով՝ ԱՄՆ-ն ունի նաեւ կողմնորոշուելու մէկ այլ խնդիր. «ԱՄՆ-ն կը կարողանա՞յ կողմնորոշուել՝ զօրավիճակ լինել ժողովրդավարական գործընթացներին, թէ՞ անվտանգութեան հարցերի մէջ զօրավիճակ լինել դիկտատուրային: ԱՄՆ-ի էլիտան պատրաստ է քննարկել իր ապագայի անելիքներն ու մարտահրաւէրները», - հարցնում է Լիպարիտեանն ու ինքն էլ պատասխանում:

«Իրաքի շուրջ վէճերը ցոյց են տալիս, որ ԱՄՆ-ն անկարող է

լուծել այդ հարցերը»: Այս առումով, նաեւ յիշեցնելով, որ ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիան եւ Յունաստանը չկարողացան լուծել կոնֆլիկտը, եւ ՆԱՏՕ-ն ոչինչ չկարողացաւ անել ու Թուրքիան մտաւ Կիպրոս, Լիպարիտեանը հարց է հնչեցնում, որքանով ՆԱՏՕ-ն կարող է լուծել Հարաւային Կովկասի, կամ Հայաստանի խնդիրները: «ՆԱՏՕ-ն նման է դեղահաբի, որ օգտակարութիւն ունի, բայց ինչպէս դեղը՝ ամէն մարմնի վրայ չէ, որ օգտակար է», - ասաց Լիպարիտեանը եւ եզրակացրեց, որ ՆԱՏՕ-ի հետ յարաբերութիւնների խորացումը միայն կը խորացնի մեր տարածաշրջանում առկայ խնդիրները:

Ժիրայր Լիպարիտեանի կարծիքը մասամբ էր կիսում «Համաձայնութիւն» կենտրոնի ղեկավար Դաւիթ Շահնազարեանը: Նրա կարծիքով, կայունութիւն լինում է այն դէպքում, երբ հարեւան երկրները միեւնոյն անվտանգութեան համակարգում են: Ըստ նրա՝ Հարաւային Կովկասում առկայ խնդիրների պատճառն այն է, որ մեր տարածաշրջանը քաղաքականապէս խիստ բեւեռացուած է. Վրաստանը ձգտում է ՆԱՏՕ եւ շատ աւելի ակտիվ է նրա հետ յարաբերութիւններում, քան ՆԱՏՕ-ի անդամ տարբեր երկրները: Ատրպէյճանը նոյնպէս յայտարարել է դրա մասին, իսկ Հայաստանը շարունակում է մնալ Ռուսաստանի անվտանգութեան հովանոցի ներքոյ, միաժամանակ լուրջ յարաբերութիւններ ստեղծելով ՆԱՏՕ-ի հետ:

«Հենց տարբեր կառույցներում տարբեր աստիճանի ներգրաւուածութիւնն է տարածաշրջանում կոնֆլիկտների պատճառ դառնում», - եզրակացրեց Դաւիթ Շահնազարեանը եւ աւելացրեց, որ մինչ օրս երեք երկրների ղեկավարները չեն գիտակցում միասնական տարածաշրջանային աշխարհաքաղաքական շահը:

ՐԱՅԱՍՏԱՆ

ՍԵՐԺԸ ՉԻ ՇՏԱՊՈՒՄ

Մայիսի 12-ի խորհրդարանական ընտրություններից անցել է ավելի քան երկու շաբաթ, բայց մինչ օրս յայտնի չէ, թե ովքեր են լինելու մեր նախարարները, կառավարությունն առնթիվ մարմինների դեկավարները, մարզպետները եւ այլն:

Բայց ամբողջ խնդիրն այն է, որ ոչ թե դա գաղտնի է պահուած, ու տեղեկատուութեան արտահոսք չի լինում, այլ այն պարզ պատճառով, որ այդ մասին դեռ ոչ ոք չգիտի: Չգիտեն անգամ նրանք, ովքեր որոշելու են մեր կազմաւորուելիք կառավարութեան կազմը: Անգամ յայտնի չէ՝ քաղաքական որ ուժերը որքանով են մասնակից լինելու ապագայ կառավարութեանը:

Այս վիճակը, անշուշտ, աննախադէպ է: Նախկինում տեղի ունեցած ԱԺ ընտրութիւնների ավարտից մի քանի օր յետոյ կազմաւորուելիք կառավարութեան կազմի մի 70-80%-ն արդեն պարզ էր լինում: Այս անգամ վիճակը ակնյայտօրէն այլ է: Տպաւորութիւնն այնպիսին է, որ հանրապետականները լրիւ անակնկալի են եկել «միջազգային չափանիշներին համապատասխան» անցկացուած ընտրութիւնների արդիւնքում իրենց «ստացած» խորհրդարանական մեծամասնութիւնից ու հիմա չգիտեն, թե ինչ անեն դրա հետ:

Հանրապետականն ունի երկու տարբերակ: Առաջին տարբերակով՝ ՀՀԿ-ն կարող է ամբողջովին իրացնել այդ մեծամասնութիւնը, այսինքն՝ միայնակ կազմել կառավարութիւն, բայց պատրաստ լինել, որ իր երբեմնի դաշնակիցները պէտք է իր «տակը փորեն», ինչն անխուսափելի է: Երկրորդ տարբերակն այն է, որ հենց դրանից խուսափելու եւ երկրում տեղի ունեցող բոլոր գործընթացների պատասխանատուութիւնը մենակ չկրելու համար իշխանութիւնը կիսել՝ միաժամանակ իշխանական կերակրատաշտակից ու լծակներից միւսներին չզրկելու պայմանով: Հենց այս՝ երկրորդ տարբերակի շուրջ էլ ներկայումս բանակցութիւններ են գնում Հանրապետականի, ՀՅԴ-ի եւ ԲՀԿ-ի միջեւ:

Հանրապետականը այդ բանակցութիւններում Սերժ Սարգսեանը ներկայացնում է միանձնեայ: ԲՀԿ-ի անտւնից հանդէս է գալիս Ռոբերդ Քոչարեանը՝ կրկին միանձնեայ, իսկ ՀՅԴ-ն բանակցութիւններում ներկայացնում են Գերագոյն մարմնի մի քանի անդամներ, բայց պարբերաբար նրանց օգնութեան է գալիս կրկին Ռոբերդ Քոչարեանը: Բանակցութիւնների կողմերից իւրաքանչիւրը փորձում է ստանալ առաւելագոյնը. Սերժ Սարգսեանը փորձում է հնարաւորինս պատասխանատուութիւնը բաշխել միւսների վրայ, բայց նուազագոյն լծակներ թողնել նրանց, իսկ ՀՅԴ-ն ու ԲՀԿ-ն փորձում են հնարաւորինս քիչ պատասխանատուութիւն վերցնել, բայց ձեռք գցել հնարաւորինս շատ լծակներ:

Ահա սա է իրավիճակն այս պահին, եւ բանակցութիւնները դեռ շարունակուած են: Ո՛չ հանրապետականները, ո՛չ էլ ՀՅԴ-ն ու ԲՀԿ-ն առայժմ ոչ մի կոնկրետ արդիւնքի մասին չեն յայտարարում եւ չեն էլ կարող, որովհետեւ այդպիսիք պարզապէս չկան:

Ռոբերդ Քոչարեանի՝ այս շաբաթ օրը արած յայտարարութիւնը, թէ կոալիցիա կը կազմուի, կարելի է գնահատել որպէս բանակցութիւններում ձեռք բերուած պայմանաւորուածութիւն: Սակայն մեր ունեցած տեղեկութիւնների համաձայն, նման վերջնական պայմանաւորուած

ծուծիւն չկայ, եւ Քոչարեանի յայտարարութիւնը, այսպէս ասենք, մի փոքր շանտաժ է, որպէսզի Սերժ Սարգսեանը, նրա հետ յարաբերութիւնները չսրելու համար, ստիպուած լինի համաձայնել կոալիցիա կազմելու գաղափարին: Թե ինչպէս սրան կ'արձագանքի Սարգսեանը, դեռ անյայտ է, բայց մեծ է հաւանականութիւնը, որ Քոչարեանի շանտաժը հասնի իր նպատակին, այլապէս կը սկսուի Քոչարեան-Սարգսեան հրապարակային հակամարտութիւն, ինչը, գոնէ այս պահին, ձեռնտու չէ նաեւ Ս. Սարգսեանին:

Ամէն դէպքում, այժմ ավելի հաւանական է թուում կոալիցիոն կառավարութեան հեռանկարը: Կոնկրետ դէմքերի մասին այս պահին հնարաւոր չէ խօսել: Այժմ միայն յայտնի է, որ Քոչարեանը պնդում է, որպէսզի կրթութեան եւ գիտութեան ու գիւղատնտեսութեան նախարարների պաշտօններում մնան դաշնակցականներ Լեւոն Մկրտչեանը եւ Դաւիթ Լոբեանը:

Սկզբունքորէն Սերժ Սարգսեանը կարող է դրան համաձայնել, բայց ՀՅԴ-ի ախորժակը դրանով չի սահմանափակուած, եւ Դաշնակցութիւնը կրկին բարձրացրել է կոալիցիայի դէմ պայքարի միասնական մարմին ստեղծելու եւ այն Դաշնակցութեանը տալու խնդիրը, ինչը Սերժ Սարգսեանին համաձայնուելու հնարաւորութիւն չի տալիս:

Ըստ էութեան, որքան կարելի է դատել իշխանական կուսակցութիւններից սպրդած ժլատ լուրերից, հենց այս չլուծուած խնդիրն է կոալիցիա ստեղծելու հիմնական խոչընդոտը:

ԲՀԿ-ի մասով որեւէ լուրջ հակասութիւն Սարգսեանի եւ Քոչարեանի միջեւ չկայ: ԲՀԿ-ն պատրաստ է նախարարական մի երկու պորտֆելի դիմաց դառնալ ՀՀԿ-ի կցորդը եւ լրացուցիչ յաւակնութիւններ չի ներկայացնում:

Սակայն հենց ՀՀԿ-ի ներսում էլ վիճակը հեռու է յստակ լինելուց: Հրապարակուած լուրերը՝ այս կամ այն հանրապետականին որեւէ պաշտօնում նշանակելու մասին, ընդամենը ՀՀԿ-ի որոշակի խմբի ցանկութիւնների արտայայտումն է, որի իրականանալու հաւանականութիւնը ճիշդ այնքան է, որքան չիրականանալուը: Բայց մի բան ակնյայտ է՝ այս անտրոշ վիճակից առաջին հերթին հենց հանրապետականների նեարդերն են տեղի տալիս: Յատկապէս նրանցը, ովքեր յաւակնում են առանցքային պաշտօններ ստանալ թէ՛ խորհրդարանում եւ թէ՛ կառավարութիւնում: Եւ կազմային նշանակումների մասին շրջանառուող լուրերը հենց դրա արդիւնքն է: Ուշագրաւ է, որ թէ՛ ՀՀԿ-ում եւ թէ՛ ՀՅԴ-ում գրեթէ համոզուած են, որ կառավարութեան նոր կազմի շատ թէ քիչ յստակ պատկերը յայտնի չի

ՍՏԱՄԲՈՒԼԵԱՆ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«Սեղա՞ ... Հայաստանի՞ց: Թուրքերէն գիտէ՞ք ... (Թուրք սահմանապահը տարակուսանքով նաչում է ինձ) ... Թուրքերէն չգիտէ՞ք ... բայց անունը Սեղա է, գիտէ՞ք որ Թուրքական անուն է...»

Աթաթիւրք օղակայանում իմ ու թուրք սահմանապահի այս երկխօսութիւնը մէկ-երկու րոպէից ավելին անգամ չտեւեց: Ես Թուրքիայի սահմանն անցալ ավելի արագ, քան Հայաստանինը՝ Երեւանի Զուարթնոց միջազգային օդանաւակայանում: Այստեղ անձնագրային ստուգումը, եւ իմ ու ազգութեամբ ուս սահմանապահուհու գրոցը տեւեց մօտ տասը րոպէ: Մարտի 24-ին ես Ստամբուլ էի մեկնում, իսկ որպէս տրանզիտային քաղաք ընտրել էի Գերմանիայի Միւնխենը:

«Ինչու՞ էք մեկնում Ստամբուլ՝ Միւնխենով», - հարցնում է սահմանապահուհին: Պատասխան. Ուղիղ չարտերային չուերթը կանոնաւոր չէ ... : «Բայց չէ՞» որ այդպէս թանկ է» ... նորից եմ կրկնում, որ Երեւան-Ստամբուլ չուերթը կանոնաւոր չէ, ու երբ տոմս էի գնում, ինձ ասացին, որ չգիտեն, թէ երբ է մեկնելու ... իսկ վերադարձի մասին հարցն ավելորդ էր ... Նորից նոյն հարցը, բայց ինչու՞ Միւնխենով:

Թէեւ չէի ուզում վերադառնալ սահմանապահի ազգային գզգզմունքները, բայց ի վերջոյ նա ինձ ստիպեց ասել. Աէրֆլայթից գերադասում եմ չօգտուել, թէեւ այդպէս ավելի է ծան է: Իմ անձնագիրը տարան յատուկ սենեակ, որտեղ մի քանի այլ սահմանապահներ կային: Յետոյ ինձ էլ հրաւիրեցին ու կրկնուեց վերը նշուած հարց ու պատասխանը՝ գրեթէ նոյնութեամբ: Այնուհետեւ ինձ խնդրեցին բացատրել, թէ ինչու՞ եմ մեկնում Ստամբուլ, ու խնդրեցին ցոյց տալ կոնֆերանսի մասնակցութեան հրաւերը: Յետոյ խնդրեցին, որ ես Միւնխենի օդակայանի տրանզիտային մասից դուրս չգամ (ցանկութեան դէպքում նոյնիսկ դուրս գալն անհնար է, քանի որ հարկաւոր է անձնագրային ստուգում անցնել, իսկ առանց մուտքի արտօնագրի այն անցնել պարզապէս չի ստացուի): Վերջում ասացին. մենք շատ ուշադիր ենք մեր ուղեւորների հանդէպ, ու հոգում ենք նրանց մասին ... Նման ավելորդ ժամավաճառութեան Աթաթիւրք օղակայանում ես չհանդիպեցի: Օդակայանի թուրք աշխատակիցները միայն անկեղծօրէն զարմանում էին Սեղա անունն ու հայ, Հայաստանի քաղաքացի լինելու փաստի վրայ:

Օդանաւակայանից սկսուած «զարմանքն» ինձ ուղեկցեց Ստամբուլում անցկացրած 7 օրերի ընթացքում: Տուրիստների մշտական ներկայութեանը սովոր Ստամբուլ

ցիւնների սիրելի հարցերն են. «որտեղի՞ց ես», «անունդ ի՞նչ է», «առաջի՞ն անգամ ես Ստամբուլում»: Այս հարցերն ամենուր են հնչում. խանութներում, սրճարաններում, թանգարաններում ...

ելլել, տղուն միջոցաւ ստացաւ օգնութիւնը: (դիմացայ որ, վերջերս մահացեր է հէզ կինը: Աստուած հոգին երկնային լոյսերու մէջ պահէ): Փոքրիկ գումար մը յանձնեցի «Երեւանի Սենեկային Երգչախումբ»ին, ինչպէս նաեւ «Կոմիտաս Երաժշտանոց»ի ֆոլքլորային բաժնի հիմնադրամին, որուն նպատակն է հրատարակել անհրաժեշտ եւ կարեւոր գործեր: Երկու երիտասարդ աշխատող երաժշտուհիներու ընտանիքները ապահովեցին անցեալ ձմրան իրենց տան ջեռուցման ծախսերը: Երիտասարդ գոյգ մը, կատարելագործուած երգիչներ, կարողացան իրենց անդրանիկ, նորածին երեխային անհրաժեշտ կարիքները հոգալ, եւայլն:

Զմոռնանք որ, այսպիսիները արհեստավարժ (professional) երաժիշտներ են: Իրենց ապրուստը կ'ապահովեն հայրենի երաժշտութեան անդաստանէն ներս աշխատելով: Երբ

գործ չըլլայ, սեղանին վրայ հաց դնող չըլլար:

Միւրեւի ու ազնիւ ազգակիցներ, կեանքիս գործունէութեան առանցքը դարձնելով հայ մշակոյթին եւ հայ ժողովուրդին ծառայելը, եօթանասունմէկ տարեկան հասակիս, անձիս իրաւունք կու տամ այս տարի եւս հայրենի կարօտեալ երաժիշտներուն օգնութեան հասնելու խնդրանք ներկայացնել ձեզի:

Աստուծոյ օրհնութեամբ բաղաւորուած ազգայիններ, եկէք ձեր օգնութեամբ թեթեւցնէք մեր հայրենի կարիքաւոր երաժիշտ մշակներուն կեանքին սոմոյն վիճակը եւ ցոյց տանք թէ՛ անոնք մոռցուած ու լքուած չեն, այլ գնահատուած են բոլորիս պատկանող հայ մշակոյթին բերած իրենց անձնուրաց նուիրումին համար:

Առիթ ստեղծենք մեր յարգելի երաժիշտներուն ու երաժշտագէտներուն ապրելու իրենց վարկին

## New Offices For Lease

### IN PASADENA

On Allen Ave. • South of Washington Blvd.

Available spaces are between  
250sq.ft. TO 460sq.ft.  
**ALL UTILITIES ARE INCLUDED**

For More Details  
Call Vartan  
**(626) 255-2537**





# Wahib's

**MIDDLE EAST RESTAURANT**

الشرق مطعم

**MEDITERRANEAN LEBANESE FOOD**

COME IN AND ENJOY OUR PATIO AND THE FINEST SHISA "HOOKAH"

## CATERING FOR ALL OCCASION



FAMILY ENTERTAINMENT  
BANQUET HALL  
EVERY  
FRIDAY ~ & ~ SATURDAY  
NIGHT  
INTERNATIONAL ~ ARABIC  
CALL FOR RESERVATION



# BELLY~DANCING

MOUHAMAD SALEM  
& HIS BAND ~ VARTAN / NAZO & AMIR

910~E.MAIN ST, ALHAMBRA, CA.  
TEL 626-281-1006 626-587-1048  
FAX 626-281-3641

ՊԱՏՈՒԱԾԵ

ԱՄՏԱՃԱՆԱԳՈՒՄ

Մ. ՀԱՅԿԵՆՑ

Ամուսինս հիւանդներու շատ դէժ տեսակին կը պատկանի. հիւանդութիւն հրաւիրող ամէն ինչ կ'ընէ, բայց կը սոսկայ հիւանդանալէ, իսկ երբ հիւանդանայ, ինծի հետ կը կռուի որպէսզի բժիշկ չտեսնէ: Անցեալ շաբթուան անտանելի մէջքի ցաւը բժիշկին դէմ թշնամութիւնը մոռցուց:

Երկուշաբթի կէսօր ինք ու ես նստած ենք մօտակայ էնկլ հիւանդանոցին ախտաքննութեան բաժնին սպասման սրահը: Ատենը անգամ մը կապոյտ գոգնոցով աղջիկ մը կ'երեւի դրան առջեւ, անուն մը կը կանչէ եւ բազմութեան մէջէն հիւանդը կը հետեւի անոր դէպի նկարչատուն:

Բոլորը հոս են կերպով մը նկարուելու համար. իրենք բնապիտի չտեսնեն իրենց նկարուած մասին կամ մասերուն պատկերները: Բժիշկ մը պիտի «կարդայ» գանոնք եւ տեսածը հաղորդէ հիւանդին բժիշկին:

- Բիվիանա Օրթեկա Կոնսալվօ տէ Մայօ:

Անուշիկ դէմքով, լեցունկեկ, քառասուննոց կին մը ոտքի ելաւ եւ կաղալէն հետեւեցաւ կապոյտ գոգնոցով աղջկան:

Ո՞վ գիտէ ինչ դժուարութիւն ունի Բիվիանան: Քովը նստող տարիքոտ կինը ամիսն մէջ ոլորած ճերմակ թուղթով թաց աչքերը սրբեց: Թերեւս մայրն էր կամ կետուրը: Աստուած Բիվիանային հետ ըլլայ:

Կը դիտեմ նստողներուն դէմքն ու շարժումները: Ծանօթ չկայ. հայ ալ չկայ անպայման, քանի որ հայերէն խօսող չեմ լսեր:

- Երկար եղաւ, չըլլալիք է, գործ ունիմ, մա՛յրը...: Ինչո՞ւ չկրցար ուրիշ օր ընտրել: Չե՞ս գիտեր որ շաբաթավերջի գործերը երկուշաբթի օրուան գլխուն կը պայթին:

Ամուսինիս անհամբերութեան առաջին պոռթկումը չլսել կը ձեւացնեմ յուսալով որ իր կարգը չ'ուշանար: Տրամաբանականօրէն ի վերջոյ բոլոր այս հիւանդները նկարչական նոյն գործիքով պիտի չնկարուին եւ հետեւաբար ժամանման հերթի կամ Ֆրէսթ, գամ Ֆրէսթ սըրվի հարց չկայ: Բայց մտքով կը պատրաստուիմ երկրորդ պոռթկումը դիմագրաւելու, առանց աչքս հեռացնելու դռնէն:

Ահա կապոյտ գոգնոցով աղջիկը, յոյսա, ո՛չ... փրկիչս: Ինչ կ'ըլլայ, մէջ մը արտասանէր Ասլան Գրիգորեան անունը ինչ ձեւով որ կ'ուզէր, միայն արտասանէր, մենք պիտի հասկնայինք առաջին գիրին առաջին հնչիւնէն:

- Յետուս Ռիքարտօ Փայէյա: Շարժող չկայ: Չգած գացած է արդեօք: Երկրորդ կող մը, այս անգամ ուժգին: Կապոյտ գոգնոցով աղջիկը բարկանալ գիտէր:

- Յետուս, Յե՛տուս:

Դալուկ դէմքով երիտասարդը, որ գլուխը աջ ուսին նետած կը խուկար, աչքերը բացաւ, չորս կողմը նայեցաւ տարբեր մոլորակէ մը ինկածի պէս եւ օրօրուէլէն ուղղուեցաւ դէպի միջանցք:

- Քալէ տուն երթանք, օրս մեռաւ, մա՛յրը...:

Ուշադրութիւնը շեղեցնելու համար պայտուսակէս թերթը հանելով ցոյց կուտամ ծանօթներու նկարները:

- Գրի՛, ըսի իր սիրած փաղաք-շական անունով, կարդայ: Հայաստանի Երեխաներու Օգնութեան Հիմնադրամը անցեալ շաբաթ աւելի քան երկու միլիոն տոլար գոյացուցեր է: Ուրախալի է, չէ՞:

Բարեբախտաբար կապոյտ գոգնոցով աղջկան կանչը այս անգամ ինայցեց անծանօթին անծանօթ մայրը:

- Էյս... Էյգ... Էյգլէն Գրի-գորենէ:

Ամուսինս տեղէն ցատկեց, ըստ իր սովորութեան փառք տալով Աստուծոյ: Ջարմանալի է. ամէնէն աննշան նեղութեան յաղթահարումը ինչքան գոհունակութիւն կը պատճառէ մարդ կոչուած արարածին: Սրահին մէջ սպասման սրահեղութիւնը վերջ գտած էր. պիտի սկսէր միւս սպասումը, քանի մը օր քուն փախցնողը... Ի՞նչ պիտի պատմէին պատկերները:

- Իմ ալ կնիկս տակաւիններն է...

Հապա հայ չկար: Մեր դիմացի աջ կողմէն չորրորդ աթոռին վրայ նստած ճարտար, ցցուն փորով մարդն է, որ հոն էր երբ ներս մտած էինք: Շատ գէշ գզգզի որ հայ մը լսած էր ամուսինիս անշնորհ արշաւանքները անծանօթին անծանօթ խեղճ մօր վրայ: Ժպիտոս քաղկերեց զինք որ տեղէն ելլէ եւ գրաւէ կողքիս աթոռը:

- Կինդ ի՞նչ ունի, հարցուցի բան մը ըսած ըլլալու համար, կարծես հին ծանօթներ ըլլայինք:

- Չեմ գիտեր: Ստամբօ՞քն է, սի՞րտն է, ցաւ ունի: Չեմ գիտեր, յայտնի չէ...: Երկրորդ կնիկս է, ինձմէ բաւական պզտիկ, աղէկ աղջիկ է: Երեք տարու գաւակ մը ունինք: Առաջին կնիկս ալ լաւ էր: 30 տարի միասին ապրեցանք, բայց մայրը աւրեց ամէն բան: Ատ կնիկը 10 տարի մեզի հետ ապրեցաւ: Ամէն բանի կը խառնուէր: Ա՛լ չկրցայ դիմանալ եւ օր մըն ալ կնիկիս վերջնագիր տուի՝ կա՛մ ես, կա՛մ մամադ: 30 տարուան կնիկս մայրը ընտրեց. երեւակայէ: Մա՛յրը...:

Ինչ որ է, դատարան ինկանք: Ես փաստաբան չվարձեցի: Ամէն մարդ ինծի ըսած որ խնթ չեմ: Դատարանն ալ պահանջեց որ փաստաբան մը ունենամ: Ըսի, Տէր դատաւոր, ամէն յարգանքներովս, ես փաստաբան-մաստաբանի պէտք չունիմ: 30 տարուան կնիկս է, թող առնէ ինչ որ ունիմ: 30 տարի հետը ապրելէ ետք փողոց չպիտի ձգեմ ես:

Մտքիս ծայրէն չէր անցնել որ սովորական հարցում մը մէկ շունչով

սիրտը պարպել պիտի տար: Թերեւս բարեկամ չունէր, մտածեցի, կամ ալ անոնցմէ էր որ դիմացը ելլողին նոյն բանը կը պատմեն: Բայց շատ դժուար կացութեան մը մէջ վեհ կեցուած քը չէի կրնար անարձագանգ թողուլ:

- Շիտակ վերաբերում ունեցեր ես, ըսի:

Մարդը աչքերը յարեց առատադին, առանձնացաւ ինք իրեն հետ՝ մակոյկով վերադառնալէ ետք ցաւի մօտիկ կղզիէն:

- Ուրիշ բան չէի կրնար ընել, խօսեցաւ քթին տակէն հագիւ լսելի ձայնով: Խիղճ ըսուած բան մը կայ:

Կապոյտ գոգնոցով աղջիկը սկսած էր յայտնուել աւելի յաճախ: Նկարուելու գործողութիւնը աւարտած հիւանդներէն անոնք որ սպասող ունէին, սրահ կուգային: Տարեց կինը ուրախացաւ Բիվիանան տեսնալով. անոնք միասին մեկնեցան:

- Ես հարուստ չեմ, բայց հանգիստ կ'ապրինք, այս անգամ հաստատ ձայնը լսելի դարձուց մարդը: Դուն ճրգեցի ես եւ անպայման գիտես Գլիֆայոս Փարքի ըրն փուէնը: Ճիշդ հոնտեղէն տուն մը գնեցի. քանի մը շաբաթ ետք կնիկիս հիւանդութիւնը մէջտեղ ելաւ: Այստեղ բժիշկները, հիւանդանոցներն ու դեղարանները մոխր կը մարեն: Անոնց ձեռքը ինկողը կը մաքրուի:

Տէր Ղուկասը յանձնարարեց որ կնիկս Հայաստան տանիմ դարմանումի համար: «Հիմա ազատ-անկախ է, ա՛մմէն ինչ էժան է», ըսաւ: Առիթէ՛ն պիտի օգտուէի... ու ուէյ: Ժողովուրդին կէսը անգործ... 15 տարի է...

Նոր երկիր է, ի՞նչ ընենք:

Նպատակս կասեցնել էր մարդուն թափը, որովհետեւ ձայնի բարձրացումը նկատելի դարձած էր տակաւ պարպուող սրահին մէջ: Հաւանաբար ամուսինս քիչ մըն ալ պիտի ուշանար, բայց կ'ակնկալէի որ խօսակիրիս կինը եկած ըլլար մինչեւ հիմա: Կ'ուզէի զինք տեսնել, հետը խօսիլ, նայիլ թէ երկուքը յարմար էին իրարու...: Ազգային ճիւղի թիւնն ու լեզուանիւթիւնը, խորհեցայ, պատճառներ կրնային եղած ըլլալ արտաքին ոչ գրաւիչ, տարիքով իրմէ մեծ այս մարդուն հետ ամուսնութիւն կնքելու: Ես նկարագրով հետաքրքիր մէկը չեմ, բայց երբեմն...

- Նոր երկիր չէ, բարկացաւ ոտքի ելլելով, դէմքը ինծի, կունակը՝ դրան: Քիւրտերը, քիւրտերը Իրաքի հիւսիսը՝ ինքնավար Քիւրտիստանը դրախտի վերածեցին 10 տարուան մէջ: Երեւակայէ: Քեզի տամ մե՛ր հաշուեկշիռը -70 տարի ծանր գոհողութիւններ, մշակոյթի, գիտութեան եւ ճարտարարուեստի գոհար երկիր մը իր բնական վիճակին վերադարձած անկախութեան 5-րդ տարին, կիսով պարպուած 10-րդ տարին, քաֆէճի եւ հոթելճի դար-

ձած 15-րդ տարին:

Անկախութեան 15 տարիներու պատմութեան լուսաւոր էջը Ղարաբաղն էր իրեն համար: Հող շահած էինք, Հայաստանը մեծցած էր, պաշտպանութիւնը գորացած: Էջմիածնի բազմացող միաբանութիւնը աստառը ցոյց պիտի տար քանի մը տարիէն: Մնացեալը սիրտը բզբտեր էր: Ձայնը կը դողար. ճակատը կարմրած էր: Եթէ հիւանդանոց չըլլայինք, հաւանաբար բռունցքը պատին մխրճէր: Մարդը քաղաքացիական ներքին կռիւ մը կը մղէր: Ինչ մեղքս պահեմ, միտքս դրամի գնաց: Խորհեցայ որ տուժած կամ... այրած սիրուեալս ինկեալս մը կրնայ եղած ըլլայ, բայց չհամարձակեցայ մտածուծս յայտնելու:

- Մեր երկիրն է, պէտք է օգնենք ամէն կերպով: Համաձայն չե՞ս: Համաձայնութիւնը գլացաւ: Ատեն մը լուռ մնաց: Չգացի որ պատասխանը պիտի ըլլար «այո-ոչ» ի մէջտեղ բան մը: Լուռութիւնը հետաքրքրութիւնս լարեց: Կ'ուզէի գիտնալ այդ բանը:

- Ամէն օգնութիւն հելալ է, բայց օգնութիւնը անօգուտ է երբ կը լեցնէ գողին գրպանը, պատգամեց վերստին գրաւելով աթոռը: Դուն գիտ չես ճանչնար: Ես անոնցմէ եմ որ եկեղեցիին նստարաններուն տակ եւ խորանին ետեւ պոլշեիկ կը փնտռէին: Դպրոցը, պատուանդանին առջեւ կանգնած ուսուցիչին մէջ պոլշեիկ կը տեսնէին: Ֆուլթայլի դաշտին վրայ մեր խումբին պարտութեան պատասխանատուն պոլշեիկ ընթրին էր: Մեր առաջին ուխտը հայրենիքի համար մեռնիլ էր, երկրորդը՝ պոլշեիկ մեռցնել կամ գոնէ պոլշեիկի մօրուք ածիլել: Էյ, չօճուի էինք: Մեր դատարարակազմական յանձնարումներն ուսուցիչներն ալ չօճուի էին:

Լուեց: Եզրակացութեան գուշակեցի որ աւարտած էր ինքնամատուց ինքնակենսագրականին այս հատուածը: Առիթէն օգտուելով փորձեցի վստահեցնել, առանց այնքան ալ վստահ ըլլալու, որ հասունցած ժողովուրդ մըն ենք, ազատ-անկախ երկիր մը ունինք, տխուր ժամանակները անցած են եւ ա՛լ չեն վերադառնար քանի որ պատճառը, իր բառով պոլշեիկը, անցած-գացած է:

Հակադարձութիւնը արագ եղաւ:

- Ո՛չ, ըսաւ, պոլշեիկը մոլշեիկը մահանա էր: Երբ դուն քեզ կը համոզես որ Հայաստանի գահը քուկդ է, քեզի կը պատկանի, դո՛ւն ես միակ արժանաւորը, թշնամի ստեղծելն ու քեզի հետեւող ոչխար գտնելը շատ դիւրին է: Հայ ժողովուրդը 600

Շաբ.ը էջ 19

Advertisement for HARUT DER-TAVITIAN, License #0B28270, located at 1807 W. Glenoaks Blvd., Suite 202, Glendale, CA 91201. Contact info: Tel: 818/502-3233, Fax: 818/502-3244, Pgr: 818/608-9898, info@excelhye.com, www.excelhye.com. Logo for EXCEL HYE INSURANCE SERVICES, AUTO • HOME • LIFE • HEALTH • DISABILITY • COMMERCIAL.

Advertisement for Merrill Lynch INVESTMENT BANKING, JACK KALANJIAN, Professional Financial Advisor. Corporate Center Pasadena, 225 So. Lake Avenue, Pasadena, CA 91101. Contact info: (626) 396-2825 Direct, (626) 376-4665 Fax, jack\_kalanjian@ml.com. Tagline: "Helping the Armenian Community Build Wealth"



# ՄԻՍԱՔ ՊԱՂՊՈՒՏԱՐԵԱՆ

## Շարունակում էջ 13-էն

**Դամասկոսի փոքրերու երաժշտանոց-դպրոցը** հիմնադրութեան շրջանին խորթ երեւոյթ էր, ուր դաշնակի, ջութակի եւ թաւջութակի դասընթացներ տեղի կ'ունենային: Կարգ մը ծիծաղելի դէպքեր ալ պատահած են, սակայն այսօր նոյն քաղաքին մէջ օփերայի շէնք հիմնուած է, ուր մօտ օրէն օփերա ալ պիտի ներկայացնենք:

**Յ.** Դամասկոսի օփերայի շէնքը ի՞նչ մակարդակով կը ներկայանայ արաբական աշխարհին մէջ:

**Պ.** Սուրիոյ օփերան երկրորդն է Եգիպտոսէն ետք եւ այլ երկիրներու մէջ չկայ: Եգիպտոսի օփերան հիմնուած է անգլիական ինսամատարութեան օրերուն եւ «Այտա» օփերան գրուած է յատուկ այդ օփերայի բացման առիթով:

Պետական մակարդակով Սուրիոյ օփերայի շէնքի համալիրին գոյութիւնը կը պարտինք մշակոյթի նախկին նախարար դոկտ. Նաճահ Աթթարին, որուն օրով կառուցուեցաւ եւ կահաւորուեցաւ լաւագոյն գործիքներով: Ան ներկայիս հանրապետութեան փոխ նախագահ է մշակութային հարցերու առնչութեամբ:

Օփերայի շարժական երգեհոնը աշխարհի լաւագոյններէն է եւ 4րդը կը նկատուի իր տեսակին մէջ: Օրին մէկուկէս միլիոն տոլարի արժողութեամբ գնուեցաւ, որ վիճաբանութեան առիթ տուաւ, երբ երկիրը այլ կարիքներ ունէր: Այս կարելիութիւններուն մասին քարոզչութիւն չէ եղած, օտար հիւրերը կը հիանան, երբ կ'այցեւն մեր երկրի օփերան:

Պաշտօնական բացման հանդիսութեան, Սուրիոյ հանրապետութեան նախագահին կողքին ներկայ էր նաեւ Մալեգիոյ թագաւորը:

**Յ.** Իրբեւ երիտասարդ խմբավար ի՞նչ հեռանկարներ ունիք:

**Պ.** Անձնակազմը, որուն հետ կ'աշխատիմ, առաջնահերթ պարտականութիւն մը ունի. յառաջ տանիլ սիմֆոնիք նուագախումբը, որուն պատասխանատուութիւնը մեզի յանձնուած է նուաճելու համար միջազգային մակարդակ:

Երկրորդ գործը, որ նաեւ անմիջական է, օփերայի ներկայացումն է: Յարդ Սուրիոյ մէջ 1995ին միայն մէկ անգամ անգլիացի մասնագէտներու օգնութեամբ այդ մէկը իրագործուած է:

Յառաջիկային պիտի իրականանայ երաժշտութիւն եւ պալէ միանաբար:

Այժմու սիմֆոնիք նուագախումբին մէջ զանազան քաղաքներէ աշակերտներ եւ նուագողներ ունինք, որոնք մօտիկ ապագային պիտի մասնագիտանան եւ իրենց քաղաքները վերադառնան, անշուշտ պիտի կազմուին զանազան խումբեր՝ Հալէպի, Լաթաքիոյ, Տէր Զօրի կամ Գամիշլիի մէջ: Ես չեմ ուզեր անձնապէս նուաճել ամէն ինչ: Թող որ այդ քաղաքները զարգացնեն իրենց խումբերը եւ մատակարարեն կեդրոնական ազգային սիմֆոնիք նուագախումբին: Այս բոլորը պէտք է ընթանան արագօրէն՝ հասնելու համար մեր առաջնահերթ նպատակին, որն է՝ նուաճել միջազգային մակարդակ:

Կը ղեկավարեմ նաեւ երիտասարդական սիմֆոնիք նուագախումբը, որ անցեալ Օգոստոսին մասնակցեցաւ Գերմանիոյ Պերլին քաղաքի «Քոնսերթ Հաուս»ի մէջ կայացած «Եանկ Եուրօ Քլասիք 2006»ի փա-

նաստնին:

**Յ.** Աճծակայն հեռանկարները ի՞նչ են մասնագիտութիւնը զարգացնելու եւ աւելի բարձր վկայականներ նուաճելու:

**Պ.** Իմ նախընտրութիւնս է միջազգային մրցումներու մասնակցիլ, որպէսզի կարենաս ցոյց տալ, թէ ինչ մակարդակով արհեստավարժ ես եւ ասպարէզիդ մէջ չափուիս այլ ուժերու հետ: Այս պարագային մրցումի մասնակցութիւնը անհատական է, իբրեւ խմբավար պիտի ղեկավարես նշանակուած խումբ մը՝ այլ խմբավարներու շարքին:

Ուսանիլը կը տարբերի, որովհետեւ միշտ ստիպելիք ունիս. սակայն մրցումի ընթացքին կը հաստատես, թէ որքան բան գիտես:

Յարդ որեւէ մրցումի մասնակցելու առիթ չեմ ունեցած: Յաճախ դիմած եմ՝ ներկայացնելով ինքնակենսագրական դիմումներ քերտ հետ, դժբախտաբար կ'անտեսեն, երբ էլ տեսնեն, թէ դիմողը սուրիացի է, որովհետեւ կ'ընտրեն միայն 15-16 խմբավար ամբողջ աշխարհէն:

Այս ծրագիրը փորձառութեան եւ յաճախակի հետապնդումի եւ յարաբերական աշխատանքի կը կարօտի, սովորութիւն ունիմ անցեալի ծանօթութիւններս պահել՝ միշտ այցելելով իտալիա, որովհետեւ չեմ ուզեր լծանալ միայն տեղական աշխատանքով:

Անցեալ տարի պետական յարաբերութեան ծիւղին մէջ Պոլկարիա հրաւիրուած էի 15 օր՝ տեղւոյն սիմֆոնիք նուագախումբին հետ գործակցելու:

Երբ բարձր մակարդակի խումբ ղեկավարես, նոր հեռանկարներ կը ստեղծուին մէջդ, լայն հորիզոններ կը տեսնես եւ ուսումներ կը կատարես:

**Յ.** Որո՞նք դերակատար եղան նախասիրութիւնը քաջալերելու, այսինքն՝ երաժշտական ուսման հետեւելու: Երախտագիտական խօսքը որո՞ւ կ'երթայ:

**Պ.** Երբ փոքր էի, ծնողներս առաջինը զգացած էին, թէ հակում ունիմ երաժշտութեան: Իրենք զիս երաժշտանոց առաջնորդեցին 6 տարեկանիս:

Աւելի ուշ, երբ էլեկտրական ճարտարագիտութեան երրորդ դասարան հասած էի եւ որոշեցի վերջնականապէս երաժշտական մասնագիտութեան հետեւիլ, ծնողներս դէմ չկեցան, սակայն թուաբանական գիտելիքներս օգտակար եղան խմբավարութեան եւ երաժշտութեան կիրարկման:

Երաժշտանոցին մէջ ունէի սուրֆէժի ուսուցիչս, որ ոչ եւս է՝ Խըրըր ձըզիէ: Շատ խիստ էր իր վերաբերումին մէջ, եւ ես երբ փոքր էի, շատ կը վախնայի իրմէ: Հիմա կը զգամ, թէ որքան կարեւոր դերակատարութիւն ունեցած է երաժշտական կրթութեանս մէջ:

Երաժշտական մասնագիտական բարձրագոյն ուսման ուղղութիւնս պատճառը Սուլհի Ուատին էր: Երաժշտական բարձրագոյն ուսումնարանի 4րդ կարգի ուսանող էի, երբ հրաւիրեց զիս խումբը ղեկավարելու 1994ին, եւ օգնեց՝ առաջին նուագահանդէսի պատրաստութեան: Յաջորդ երկու տարիներուն իր թոյլատրութեամբ մասնակից դարձայ սիմֆոնիք նուագախումբի նուագահանդէսներուն: Երբ նման անձ մը կ'ըսէ, թէ եկուր եւ տեղս կեցիր խումբը ղեկավարելու պաշտօնին, այս մէկը իւրապատուկ մարդու նկարագիր է: Հետագային, երբ բարձրագոյն ուսման տիրացայ, խումբին

ղեկավարութիւնը վստահուեցաւ ինծի:

**Յ.** Գետաքոքրական երեւոյթներ կա՞ն, գորս կ'ուզես ընթերցողներուն տեղեկացնել:

**Պ.** Երաժշտանոցի ուսուցիչի հանգամանքով մաս կը կազմեմ մուտքի քննութեան յանձնախումբին:

Վերջերս Թարթուսէն աշակերտ մը ներկայացաւ՝ թաւջութակ նուագող, որ երաժշտական ուսում չունի, ինքնուս կը նուագէ: Այդ քաղաքին մէջ ոչ մէկ երաժշտական դպրոց կամ դասընթաց գոյութիւն ունի, նախնական գիտելիքներէ անտեղեակ, սակայն նուագելու փորձեր կատարած է եւ մասամբ մը յաջողած՝ ձայներու ներդաշնակութիւն ստեղծելու:

Նման աշակերտ մը կարելի չէ ընդունիլ, որովհետեւ պայման է, որ երաժշտական ուսում ունենայ երաժշտական բարձրագոյն ուսումնարան ընդունուելէ առաջ, սակայն նկատելով, որ ձիրք մը կայ եւ պէտք է զարգացնել, օրէնքը խախտելով զինք ընդունեցինք, պայմանաւ որ առաջին մէկ տարուան ընթացքին ինքզինք փաստէ, սոլֆեժ եւ նախնական գիտելիքներ արագօրէն ընկալէ:

Նման երեւոյթներ մեզի կը թելադրեն զարկ տալ հեռաւոր քաղաքներու մէջ երաժշտական շարժում ստեղծելու՝ կերտելու համար տեղական նահանգային խումբեր, որոնք հիմնաքարը պիտի ըլլան ազգային պատուաբեր խումբի մը յառաջիմութեան:

**Յ.** Միջազգային կամ պետական փոխյարաբերութեան ընթացքին առիթ ունեցած ես ծանօթանալու եւ գործակցելու Դալաստանի երաժշտանո-

# ՄԵՐՏԻՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ 25-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

## Շարունակում էջ 8-էն

ցաւ Խարբերդի յատուկ ժողովրդական պարը:

Վասպուրական աշխարհի մասին տեղեկութիւններուն մէջ յիշուեցաւ գլխաւոր քաղաք՝ Վանը, Վանայ լիճը, Ալթամարի Կղզին ու Սուրբ Խաչ Եկեղեցին, Խրիմեան Հայրիկի հրատարակած «Արժիւ Վասպուրականի» թերթը, հիմնած աղջկանց դպրոցը եւ Վանի Հերոսամարտը: Տուտուկի վրայ նուագուեցաւ «Տըլէ Եաման»ը, պարեցին Նազպար՝ «Տաւրը» եւ մենապար մը՝ «Անուրջներ»:

Հինգերորդ ներկայացումը Լեռնային Ղարաբաղն էր: Ռուս-թրքական համաձայնութեամբ 1923-ին կցուած Ազրպէյճանին եւ սակայն 1988-ին սկսուած ազատագրական պայքարով, Լեռնային Ղարաբաղ անկախութիւն կը ստանար 1992-ին: Արցախի բնութիւնը, գորգերը եւ հին վանքերն ու եկեղեցիները յիշուեցան որպէս սքանչելիքներ: Տղոց «Քոչարի» շուրջպարը, աղջիկներու «Հայուհին» նազպարը եւ «Արցախի Քաջեր» փոքրերու դրօշակներով պար-տողանցքը ժողովուրդէն որոտընդոտ ծափեր խլեցին:

Փակման խօսքով ելոյթ ունեցաւ տնօրէնը՝ Պրն. Յովսէփ Ինճէճիքեան: Իր գնահատական խօսքը ուղղելով աշակերտներուն, ան ըսաւ. «Մեզ փոխադրեցիք պատմական Հայաստանի եւ կիրկիւրի քաղաքները. մեր սրտերը հրճուանքով լեցուցիք ու հայկական հոգին որպէս «հրա-

ցիւն հետ»:

**Պ.** Հպարտօրէն եւ ուրախութեամբ կը յայտնեմ, թէ մենք Դամասկոսի մէջ 2003 թուականին տօնեցինք Արամ Խաչատուրեանի ծննդեան 100ամեակը: Այս առիթով Հայաստանէն ժամանեց դաշնակահար Արմէն Պապախանեան եւ միասնաբար ներկայացուցինք Արամ Խաչատուրեանի դաշնակի քոնչերթին: Բնականաբար մեր միջեւ նամակագրութիւն եւ բարեկամութիւն ստեղծուեցաւ:

Անցեալ տարի Հայաստան հրաւիրուած էի՝ Պետական երաժշտանոցին հետ փոխյարաբերութիւն եւ գործակցութիւն ստեղծելու ծրագրով, ուր փրոթոգով մը ստորագրուեցաւ:

**Յ.** Հալէպը իբրեւ հայաշատ գաղութ ունեցած է իր երգչախումբերը, որոնք եղած են սիրողական խումբեր, սակայն վկայեալ խմբավարներով դեկավարուած: Երեց սերունդէն յիշենք Պօղոս Ապաճեանը, իսկ կրտսեր սերունդէն Արթուր Չալէմբեարեանը: Առիթ ունեցա՞ծ էք ծանօթանալու անոնց կամ այլ երաժիշտներու հետ:

**Պ.** Շատ կը փափաքիմ ծանօթանալ եւ գործակցիլ բոլորին հետ: Կը ճանչնամ Պօղոս Ապաճեանի որդին, որ ուսանող է մեր մօտ, երաժշտական բարձրագոյն ուսումնարան:

**Յ.** Այլ ըսելիքներ ունի՞ք:

**Պ.** Երաժշտութիւնը կենսական է մարդկային հոգին յղկելու: Պայման չէ, որ ամէն մարդ արհեստավարժ երաժիշտ դառնայ, սակայն ամէն մանուկի պէտք է երաժշտական ուսման առիթ ընծայուի:

գունդ անշէջ» մտաւ մեր բոլորին հոգիներուն մէջ: Դուք ցոյց տուիք որ այդ հոգիով պիտի մեծնաք»:

Պրն. Ինճէճիքեան շնորհակալութիւն յայտնեց յատկապէս Տիկ. Աշխէն Իսբէնճեանին, ձեռնարկին յաջողութեան սատարող բոլոր ուսուցիչ-ուսուցչուհիներուն, աշակերտներուն, ծնողներուն, պարուսոյցներուն, գործակցող շրջանաւարտներուն եւ ներկաներուն:

Դպրոցին 25-ամեայ տօնակատարութեանց այս հայկական բնույթով խրախճանք-յայտագիրով Մերտինեան վարժարանը խանդավառութեամբ եւ ինքնավստահ կը նայի ապագային, անհամբեր սպասելով նոր շէնքի կառուցման ու զայն երկրորդականի հասցնելու ծրագրի իրագործման:

Մերտինեան Հայ Աւետարանական Վարժարանը 1982-էն ի վեր կը ծառայէ Քալիֆոռնիահայ համայնքին, ջամբելով ոչ միայն ուսումնական բարձր մակարդակի գիտելիքներ, այլ նաեւ հայեցի դաստիարակութիւն եւ ազգային ու կրօնական ամուր հիմքերով վրայ խարսխուած դաստիարակութիւնը, մեր նորահաս սերունդին մէջ կը կերտէ առողջ նկարագիր ու հօգօր ինքնութիւն: Վարժարանը վարկաւորուած է Դպրոցներու եւ Համալսարաններու Արեւմտեան Ընկերակցութեան կողմէ - Western Association of School and Colleges (WASC):

Վարժարանի մասին լաւելեալ տեղեկութիւններու համար հեռաձայնել (818)907-8149:

**ՄԱՍԻՍ**  
**ԱՄԵՆԱՎՍԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ**  
**ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ**

### ՄԱՐԶԱԿԱՆ

#### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Հայաստանի ֆուտբոլի առաջնության 7-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Փիւնիկ - Շիրակ 1-2  
 Բանանց - Կիլիկիա 3-0  
 Արարատ - Ուլիս 2-0  
 Միկա - Գանձասար 3-2

Խումբերու դասաւորումը

	Խաղ	Յաղթ.	Հաւս.	Պարտ.	Կոլ	Միակոր
1. Փիւնիկ	7	5	1	1	15-3	16
2. Բանանց	7	4	2	1	9-3	14
3. Միկա	7	4	1	2	16-8	13
4. Արարատ	7	4	1	2	10-2	13
5. Գանձասար	7	2	2	3	5-5	8
6. Շիրակ	7	2	2	3	5-6	8
7. Կիլիկիա	7	1	1	5	2-17	4
8. Ուլիս	7	1	0	6	2-20	3

#### ՍՈՒՊԵՐԳԱԲԱԹԸ՝ «ՓԻՒՆԻԿԻՆ»

Ֆուտբոլի Հայաստանի 2007թ. սուպերգաւաթի խաղարկութեան եզրափակիչում Երեւանի «Փիւնիկը» Մայիս 28-ին 2:1 հաշուով առաւելութեան հասաւ նախորդ խաղարկութեան յաղթող «Միկայի» նկատմամբ:

Խաղի հիմնական ժամանակը անցաւ բաւական դժգոյն պայքարում եւ աւարտուեց 0:0 հաշուով: Իսկ ահա լրացուցիչ ժամանակում «Փիւնիկը» յաղթեց 2:1 հաշուով: Չեմպիոնի կազմում աչքի ընկան Նորայր Սահակեանը եւ Գէորգ Ղազարեանը:

Թէեւ սա սուպերգաւաթի եզրափակիչ հանդիպումներ էր, սակայն «Հանրապետական» մարզադաշտում խաղին հետեւում էին ընդամենը 5-6 հարիւր ֆուտբոլասէրներ:

#### ԲՈՆՑԵԱՄԱՐՏԻԿ ԱՐԹՈՒՐ ԱՐԱՎԱՍ ՊԱՇՏՊԱՆԵՑ ԻՐ ՏԻՏՂՈՍԸ

Գերմանիան ներկայացնող հայազգի բռնցքամարտիկ Արթուր Աբրահամը շաբաթ երեկոյեան պաշտպանել է միջին քաշային կարգում IBF վարկածով աշխարհի չեմպիոնի իր տիտղոսը՝ գերմանական Բամբերգ քաղաքում կայացած մրցամարտի երրորդ ռաունդում պարտութեան մատնելով կանադացի Սեբաստիեն Դեմերսին:



Ինչպէս հաղորդում է «Ատլէթիկ Փրէս» գործակալութիւնը, սա Աբրահամի 23-րդ յաղթանակն էր եւ նուազագուծ 18-րդ մրցամարտը: Հայազգի բռնցքամարտիկը աշխարհի չեմպիոնի տիտղոսը պաշտպանում է արդէն չորրորդ անգամ:

Աբրահամը դեռ լիովին չի ապաքինուել 8 ամիս առաջ էդիսոն Միրանդայի հետ մրցամարտում ստացած ծնոտի կրկնակի կտորուածքից. Դեմերսի հետ նա մենամարտել է պտուտակներով ամրացուած ծնոտով:

«Ես հպարտ եմ, երբ յաղթեցի», - յայտարարել է հայազգի բռնցքամարտիկը՝ լաւելելով. - «Դա պատուի հարց էր»:

Դեմերսը, ով IBF-ի դասակարգման ցուցակում 15-րդն է, առաջին անգամ էր մենամարտում Գանատայից դուրս: Մինչ մրցամարտը նա յայտարարել էր, թէ «իր նշանակէտը Աբրահամի ծնոտն է»:

«Ես փորձեցի, բայց նա շատ լաւ է շարժուում», - մենամարտից յետոյ ասել է գանադացի մարզիկը: - «Նա մեծ բռնցքամարտիկ է, սակայն, կարծում եմ, ես լաւ կռուեցի երեք ռաունդներում»:

#### ՈՍԿԵՐԻՉԻ ԾԱԽՈՒ ԽԱՆՈՒԹ

Ֆրեզնոյի մէջ, 880sf 35 տար. պիզնէս, լաւ եկամուտ, բանուկ shopping center, բոլոր յարմարութիւնները ներառեալ: Յակոբ՝ 559-224-7051/559-313-0146:

#### ԳՐԱԴՈՒՄ ԹՈՒԿԱՆՆԵՐ

Յունիս 9-10 Շրջապտոյտ դէպի Las Vegas  
 Յունիս 1 Կլէնտէյլ Հ.Մ.Մ. դաշտահանդէս  
 Յունիս 14 «Մասիս» Շաբաթաթերթի ճաշկերոյթ  
 Սեպտեմբեր 1,2,3 Փաստինա Հ.Մ.Մ. եռօրեայ բանակում

Չեր Ծանուցումները Վստահեցէք  
 «Մասիս» Շաբաթաթերթին  
 T: (626) 797-7680 F: (626) 797-6863  
 Email: massis2@earthlink.net

#### ԵՐՈՒՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈՒԼ

##### ՖՐԱՆՍԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Ֆրանսայի ֆուտբոլի առաջնութեան 36-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Մոնպօ - Նանսի	2-0	Վալանսիէ - Օքսեր	1-3
Թրուա - Լանս	3-0	Թուլուզ - Պորսո	3-1
Սոչո - Սէնթ Էթիէն	1-0	Լորիան - Փարիզ Սէն ժերմէն	0-1
Լիոն - Նանթ	3-1	Մարսէյլ - Սըտան	1-0
Նիս - Լը Մանս	3-3	Լիլ - Բընէ	1-1

Առաջատար խումբերու դասաւորումը

Լիոն	38	24	9	5	64-27	81
Մարսէյլ	38	19	7	12	53-38	64
Բընէ	38	14	15	9	38-30	57
Լանս	38	15	12	11	47-41	57
Պորսո	38	16	9	13	39-35	57
Սոչո	38	15	12	11	43-43	57
Թուլուզ	36	16	8	14	46-48	56

##### ԻՏԱԼԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Իտալիայի ֆուտբոլի առաջնութեան 33-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Քաթանիա - Քիւսո	2-0	Սիենա - Լացիո	2-1
Ռեճինա - Ա. Սէ. Միլան	2-0	Ֆիորենցինա - Սամտորիա	5-1
Ինթեր Միլան - Թորինո	3-0	Ուտինէզէ - Փալերմո	1-2
Ա. Էս. Ռոմա - Մեսինա	4-3	Փարմա - Էմպոլի	3-1
Աքրոլի - Քալիարի	2-1	Լիվորնո - Աթալանթա	4-2

Առաջատար խումբերու դասաւորումը

Ինթեր Միլան	38	30	7	1	80-34	97
Ա. Էս. Ռոմա	38	22	9	7	74-34	75
Ա. Սէ. Միլան	38	19	12	7	53-30	64
Ֆիորենցինա	33	18	8	7	52-28	62
Լացիո	38	18	11	9	59-33	62
Էմպոլի	33	13	11	9	35-31	50
Փալերմո	33	13	10	10	49-43	49

##### ՍՊԱՆԻՅԱ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Սպանիայի ֆուտբոլի առաջնութեան 35-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Վալենսիա - Վիլլառէալ	2-3	Աթլէթ. Պիլլայո - Մայորքա	1-0
Պարսելոնա - Կեթաֆէ	1-0	Սելիլլա - Սարակոսա	3-1
Ռէալ Մատրիտ - Տեփ. Բորուսա	3-1	Օսասունա - Ռէալ Սոսիէտ	2-0
Ռասինլ - Լեվանթ	2-3	Սելթա Վիլո - Ռէալ Պաթիս	2-1
Յուլիպա - Էսփանիոլ	0-1	Կիմնասթիք - Աթլէթ. Մատրիտ	0-2

Առաջատար խումբերու դասաւորումը

Պարսելոնա	36	21	9	6	71-30	72
Ռէալ Մատրիտ	36	22	6	8	61-37	72
Սելիլլա	36	21	7	8	64-34	70
Վալենսիա	36	20	5	11	52-35	65
Սարակոսա	36	16	10	10	52-40	58
Աթլէթ. Մատրիտ	36	16	9	11	42-35	57
Վիլլառէալ	36	16	8	12	44-43	56

#### ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՂՁԱՆՔ

Մասիս շաբաթաթերթ շուտափոյթ ապաքինում կը մաղթէ թերթի բարեկամներէն Պր. Գէլորգ Գալուստեանին:

#### ՇՆՈՐԱԴՈՐԱՆՔ

Տէր եւ Տիկ. Մարք եւ Նայիրի Գազանճեաններու աղջիկ զաւակով (Layla) մը բախտաւորուելուն ուրախ առթիւ կը շնորհաւորեն նորածինի ծնողքին ու ընտանեկան պարագաներուն, յատկապէս Տէր եւ Տիկ. Գալուստ եւ Լենա Տէրտէրեաններուն: Այս ուրախ առթիւ \$100 կը նուիրեն «Մասիս»ին:

#### ԱՄՈՒՍՆԱՅԵԱԼՔ

ԷՏԻ ԳՈՆԻԱԼԵԱՆ

ԸՆԴ

ԳԼԱՐԱ ՃԷՐԷՃԵԱՆ

Շաբաթ, Մայիս 26, 2007

Ուրախութեամբ իմացանք էտի Գոնիալեանի եւ Գլարա Ճէրէճեանի Ս. Պասկի արարողութիւնը: Այս բարեբաստիկ առիթով «Մասիս»-ի խմբագրութիւնը կու գայ իր շնորհաւորանքները յայտնելու նորապսակ զոյգին, անոնց ծնողներուն եւ բոլոր ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Ընկ. Տիրան եւ Մարգրիտ Ճէրէճեաններուն:

\*\*\*\*\*

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

ԸՆԴ

ԹԱՄԱՐ ՓԱՓԻՐԵԱՆ

Կիրակի, Մայիս 27, 2007

Մեր ջերմ շնորհաւորութիւններն ու լաւագոյն բարեմաղթութիւնները ամուսնացեալ զոյգին եւ անոնց ընտանեկան բոլոր պարագաներուն, մասնաւորաբար՝ Տէր եւ Տիկին Ընկ. Նորայր եւ Մարի Խաչատրեաններուն:



# ՄԱՐԱԶԴ

ԱՆԱՀԻՏ ԵՐԷՅՅԵԱՆ-ՓԵՇՏՄԱԼՃԵԱՆ  
(1939-2007)

Սրտի դառն կակիծով կը գուժենք մեր սիրեցեալ տիկնոջ, քրոջ, հօրաքրոջ եւ ազգականին ԱՆԱՀԻՏ ԵՐԷՅՅԵԱՆ-ՓԵՇՏՄԱԼՃԵԱՆԻ մահը, որ պատահեցաւ Պէյրութի մէջ, յետ կարճատեւ հիւանդութեան:

- Սգակիրներ՝
- Ամուսինը՝ Էտիկ Փէշտմալճեան
- Եղբայրները՝ Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Նաթաթ Երէցեան
- Տէր եւ Տիկ. Յարութ եւ Սիրուն Երէցեան
- Տէր եւ Տիկ. Ներսէս եւ Սօսի Երէցեան
- Եղբօր գաւակները՝ Արամ Երէցեան եւ ընտանիք
- Օժիկ Երէցեան-Էրզրաս եւ ընտանիք
- Պերճ Երէցեան
- Առնօ Երէցեան
- Սիրվարդ Երէցեան
- Պարէտ Երէցեան
- Եւ համայն Երէցեան, Փէշտմալճեան, Գուլումճեան, Կոտալազեան, Տէրմէնճեան, Գասպարեան եւ Այվազեան ընտանիքները:

# ՅԱԲԱԿՅՈՒԹԻՒՆ

ԱՆԱՀԻՏ ԵՐԷՅՅԵԱՆ-ՓԵՇՏՄԱԼՃԵԱՆԻ մահուան տխուր առիթով Նոր Սեբունդ Մշակութային Միութեան վարչութիւնն ու անդամները իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ամուսինին, եղբայրներուն եւ ընտանեկան բոլոր պարագաներուն, մասնաւորաբար՝ Տէր եւ Տիկ. Յարութ եւ Սիրուն Երէցեանին:

# ԱՆՏԱՃԱՆԱԶՈՒՄ

Շաբուկնակուած էջ 16-էն

տարի ազատ-անկախ Հայաստան երազէր է եղեր եւ վերջապէս գտեր...

Հայ ժողովուրդը ե՞րբ այդ երազը տեսեր էր, ինք էր գիտեր եւ չէր ուզեր գիտնալ, որովհետեւ ըստ ըսաւը շատ էր: Կը ցաւէր որ ֆալճիներու մեկնութեամբ երազները գառանցանք կը թուէին: Ինք մեծ յարգանքով կը յիշէր խելացի եւ անձնուէր հայերը, որոնք կէտով ջարդուած եւ իր մեռելները թաղելու անկարող ազգին մահամերձ հատուածին կեանք տուեր էին, էն թէ ընտանիքները բռնապետներուն քթին տակ յաշոյղեր էին պահել անոր տունը, Հայաստանը, եւ ո՛չ միայն պահել այլ շէնցնել՝ 70 տարի Մոսկուան կիժելով, կը-թե-լով:

Իրեն համար իրագործուածին անհափեղի մեծութիւնը կը հաստատուէր այն փաստով, որ եթէ Լենին մը իր ձեռքիս քիներով կամ Սթալին մը իր ճակատներով, Եփովներով եւ Պերիաներով որոշէր ջնջել Հայկական Հանրապետութիւնը, աշխարհի վրայ ո՛չ մէկ ոյժ կրնար արգիլել, աշխարհի մեծերէն ո՛չ մէկը նոյնիսկ ճկոյթը պիտի շարժէր: Ազատ-անկախ փնտնելու համար Տէր Ղուկասը թիֆլիս կամ Պաքու պիտի երթար թերեւս ալ... Անբարար:

- Չե՞ս կարծեր, հարցուց աւելի քաղաքավարական նկատմամբ քան թէ իրապէս կարծիքս առնելու համար:

- Այդ ժամանակներու դժուարութիւնները, կէս-գիշերային անհետացումները, կուլակի ճամբարները... ինձի եւ քեզի համար պատմութիւն են, գոհերուն գաւակները, թողները...

- Օքէ՛յ, ըսաւ, համաձայն եմ, չմոռնանք: Պատմութիւնը լեցուն է մոռցուած, մոռցուելիք եւ չմոռցուելիք բաներով: Բայց արթուն պահելու համար գէթ պէտք է հայթայթուի ժողովուրդին: Անոր արդէն կարճ յիշողութիւնը պէտք է ճանթկուի:

Գիտէի որ ձէթը քիմիական բաղադրութիւն մըն է, պահ մը արթնութիւն կուտայ, յետոյ կը չիմարցնէ եւ կրնայ մեռցնել, բայց չկրցայ անմիջապէս կապ մը տեսնել հայ կեանքին հետ:

- Էականը հայրենիք չկորսնց-

նելն է, շարունակեց, հայրենիքի գոյութիւնը: 1915-էն աւելի՝ չմոռնալ 1915-ի դա՛սը: Դժուարութիւններ եւ դժբախտութիւններ կան ու կան: Ուրիշ բան չըսեմ: Գնա՛ ազատ-անկախ հայ աղջիկներուն հարցուր: Գիտես, չէ՞, խեղճերը կտոր մը հացի համար եւրոպական «արժէքները» շալկած վազելով ըլ՛...ինչպէ՞ս ըսեմ ը՛...վրան կը լարեն նախկին ուղտապաններու եւ սայլապաններու համար: «Հազար նագով եար»ը էրիկ պէտք է կերակրէ...եթէ քովն է: Կը հասկնա՞ս:

Ինք խաբուելէն յոգնած էր, յո՛գնած: Ա՛լ պիտի չխաբուէր եւ պիտի չխաբէր ինքզինք: Ըսելիք չունեցող հոգեւորականն ու մտաւորականը «անաստուած համայնավարութիւն» կը քարկոծէր: Աստուած ինչ գործ ունէր էքոնոմիքայի եւ փոլիթիքայի մէջ: Աստուած կա՞ր դեմոքրատիներուն, ռեփուպլիքէներուն, աշխատաւորականներուն, գափիթալիսթներուն կամ սոցիալիսթներուն մէջ:

- Իմ գիտցածս այն է, ըսաւ, որ Աստուած իր ամբողջ փառքով նստած է Սատտամ Հիւսէյնի երկիրը...: Ներկայ է Իրաքի բոլոր կուսակցութիւններուն մէջ: Եւ ամէն օր գունդ առ գունդ իրաքցիներ կը դիմաւորէ ձէննէթին մէջ: Ալլահու Աբպար:

- Բայց դրկողը Ընքը Մէմն է... Մէկէն ինդուքս բռնեց: Ջարմացած ինձի կը նայէր: Անշուշտ ո՛չ իր վրայ կը խնդայի, ոչ ալ Ալլահին: Ես ի՛մ վրաս կը խնդայի, որովհետեւ բառերս ինձի յիշեցուցած էին մեր հին պատուական դրացին, սափրիչ Մէմ Փիթըրսընը, Սեբաստիոյ Ալիս գիւղէն Սամուէլ Պետրոսեանը, որ առիթ չէր փախցնէր միջազգային ամէն ինդրի մէջ Ընքըլին մատը տեսնելու:

Տարօրինակ էր որ հարցերուն քաջածանօթ, գորաւոր համոզումներ ունեցող այս պատրաստաբան մարդը կարծիք չունէր Իրաքի պատերազմին մասին: Ուսերը թօթուէր: Ճորճ Պուշ հարկաւ բան մը գիտէր: Բայց առօրեայ անվերջանալի ռմբահարումները գինք մղած էին բաղադրուելու Մուհամմէտը եւ Յիսուսը: Երկուքն ալ անձնուրացութիւն կը պահանջէին:

- Տարբերութիւնը կիրարկումին մէջ է, ըսաւ: Մէկուն հետեւորդը պատրաստ է մարմինը օդը հանելու,

# ՇՈՒԿԵՆԱՆԳԻՍ



ՍԱՐԳԻՍ ԹՈՄՈՃԵԱՆ

ՍԱՐԳԻՍ ԹՈՄՈՃԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով Կիրակի, 3 Յունիս, 2007 Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցոյ մէջ տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան պաշտօն յաւարտ Ս. Պատարագի, որմէ ետք հոգեճաշ պիտի մատուցուի Հ.Մ.Մ.ի «Սողանալեան» սրահին մէջ, 1060 N. Allan Ave. Pasadena:

- Սգակիրներ՝
- Այրին՝ Տիկ. Ազնիւ Թոմոճեան եւ գաւակունք Գոհար եւ Էնթընի Հայրը՝ Պրն. Անդրանիկ Թոմոճեան
- Քոյրը՝ Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Մարի Փամպուզեան եւ գաւակունք (Հալէպ)
- Տէր եւ Տիկ. Սեդրակ եւ Վարդուհի Սաղաթեան եւ գաւակները Ռաֆֆի, Անդօ եւ Կարպիս
- Տէր եւ Տիկ. Ժողէ եւ Աղանի Չորպաճեան
- Տէր եւ Տիկ. Յարութ եւ Մէրի Մարաշլեան եւ դուստրը
- Տէր եւ Տիկ. Կարօ Փամպուզեան (Պէյրութ)
- Տէր եւ Տիկ. Անդրանիկ Չարմինեան (Գուլէթ)
- Տէր եւ Տիկ. Շահէ Փամպուզեան (Հալէպ)
- Տէր եւ Տիկ. Խորէն Պէտէլեան (Հալէպ)
- Տէր եւ Տիկ. Յովիկ եւ Սեւան Չոմճեան (Հալէպ)
- Քէթնէճեան ընտանիք (Գանատա)
- Հանգուցեալի յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:

# ՅԱԲԱԿՅՈՒԹԻՒՆ

ՍԱՐԳԻՍ ԹՈՄՈՃԵԱՆԻ մահուան տխուր առիթը Տէր եւ Տիկ. Գէորգ եւ Մարալ Թաւուզճեաններ ցաւակցութիւն կը յայտնեն ընտանեկան բոլոր պարագաներուն:

Առ այդ փոխան ծաղկեպսակի \$100 կը նուրիեն «Մասիս»ին:

միւսինը՝ ինքնութիւնը օդին նետելու...

Ինք հայ քրիստոնեայ էր, դէմ էր ամերիկեան քրիստոնէութեան, որ անկողինը փռած էր փոփոխութեան վարդապետութեան տակ:

- Տունդ հանգիստ նստած՝ վերէն վարէն, աջէն ձախէն չէ՛նձ, չէ՛նձ կը պոռան, բողբոջ: Փոխէ, փոխէ կնիկդ եւ կօշիկդ, էրիկդ եւ սաւանարանդ, տունդ եւ հաւատքդ, թեյիվիդիդնդ եւ լեզուդ, օթոգ եւ եկեղեցիդ: Փոխէ, պապամ, փոխէ: Փոխուէ, պապամ, փոխուէ: Չէ՛նձը եթէ քու եւ իմ գլխուն զարնէր, բան չէր պակսեր: Մեր հոգեւորականներուն գլխուն զարկած է ճիշդ հոստեղէն ըսելով աջ ձեռքին միջնամատը երեք անգամ կոխեց ողորկ գանկին ճիշդ մէջտեղը:

Շարժումը նկատեց մեր դիմաց նստող երիտասարդ թուրք կինը, որ շապար չունէր եւ ճերմակ լաչակով մը ծածկած էր գլուխը: Ապշահար՝ բերանը արագօրէն բոցեց գոյգ ափերով: Թեզանքին ծայրէն կ'երեւէին ոսկի ապարանջանները: Անոնցմէ՛ ըլլալու էր, մտածեցի, առանց կարեւորութիւն տալու:

Բարեբախտաբար իսասկիցս չնշմարեց տեսարանը:

- Անգլերէնով պիտի դպչին եղեր երիտասարդներուն հոգիին: Երեւակայէ՛: Թո՛ղ հայերէն սորվեցնեն եւ հայերէնով դպչին. ինչերնի՞ր կը պակսի: Սուրբ Մեսրոպը հայերէն գրել-կարդալ սորվեցաւ, հայերէն գրել-կարդալ սորվեցուց եւ հայաստան դարձուց Յիսուսը: Անգլիախօս Յիսուսով հայ չի պահուիր, հայ չի մնար, ետրըմ:

Քիչ է ըսել որ հոգեւորականները յուսախաբ ըրած էին գինք:

Չուկը գլուխէն հոտած էր: Ինք կը ճանչնար բարձրաստիճան մը, որ տարիներէ ի վեր օձիքը յանձնած էր օձ հմայող ամերիկացիի մը, Ռասափութինի գորփորէթ տեսակէն:

- Հէյ վախ Հայ Եկեղեցի, կը մեռնիս կոր քուկիներուդ ձեռքով, մրթմրթաց եւ իր Աւետարանէն գլուխ մըն ալ կարդաց մտաւորականներուն: Չեն շարժիր, չեն գրեր, չեն խօսիր, չեն պոռար, չեն կանչեր...գործածուած չուալ ծախելու ետեւէն են: Մէկը առ...

- Բացառութիւններ կան եւ շատ յարգելի, ընդվզեցայ ես մենախօսութիւնը խզելով: Դուն իրաւունք չունիս...

- Եթէ կան, թող ձայն հանեն: Կը լռեն, ուրեմն չկան:

Սրահին մէջ միայն ինք եւ ես մնացած էինք: Ներս մտաւ կարմիր գոգնոցով աղջիկ մը եւ իրեն ըսաւ որ բժիշկը գինք տեսնել կ'ուզէր: Չեմ գիտեր ինչո՞ւ, վախ մը ինկաւ մէջս. լաւ նշան չէր: Շիտակը գղջացի յանդիմանած ըլլալուս:

Ոտքի ելաւ, կամաց-կամաց քալեց դէպի դուռը մէկու մը պէս որ չ'ուզեր մեկնիլ կամ ժամանակ կ'ուզէ շահիլ ըսելիքին վրայ որոճալու համար: Հագիւ դրան մօտ հասած ետ դարձաւ, դէպի առաջ երկու քայլ առաւ եւ թեթեւ մը ժպտելով՝

- Մոռցայ քեզի ըսելու...կարծեմ կնիկս յի է...նորէն սիրտխառնուք պէտք է ունեցած ըլլայ...Ամուսինիդ անցած ըլլայ ըսէ, իրեն հաւնեցայ, իրարու լեզուէն կը հասկնանք...օր մը առ մեզի եկուր: Կնիկս համով պուռիթօ կը շինէ...կ'ուզեմ որ հայ բարեկամներ ունենայ, հայութեան մօտենայ...կը սպասեմ, հա՞րոն փուէնի տունն է, չմոռնաս...

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ■ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

Բեղմնաւոր Անցեալ,  
Լուսաշող Ապագայ:



Proud Past,  
Exciting Future.

Affiliated with AGBU Manoogian-Demirdjian School



**AGBU PASADENA HIGH SCHOOL**

THE QUALITY AND SAFE ALTERNATIVE  
FOR YOUR CHILD'S HIGH SCHOOL EDUCATION

**Registration  
in Progress  
2007-2008  
Academic Year  
Grades 9-12**

*Experienced & Caring Faculty  
College Preparatory Programs*

**AGBU HIGH SCHOOL - PASADENA**  
2495 E. MOUNTAIN STREET, PASADENA, CA 91104  
(CORNER OF ALTADENA DRIVE AND MOUNTAIN STREET)

*For more information, campus tour  
and a meeting with the Principal,  
please call 626-794-0363.*

**DINNER DANCE  
AND AWARDS CEREMONY**

*Organized By*

AGBU PASADENA GLENDALE CHAPTER  
SPORTS COMMITTEE

**SATURDAY, JUNE 2, 2007 - 8:00 PM**

AGBU ALEX MANOOGIAN CENTER  
2495 E. Mountain Street  
Pasadena, CA 91104

Entertainment  
**SOGHOMONIAN BAND**

*Featuring*  
TAVIT SAMUELIAN

Awards presented to  
1st, 2nd, 3rd Place Winners

**Funds Raised Will Benefit  
Pasadena Glendale Chapter's  
Athletic Programs**

Donation: \$50  
Athletes and Children under 12: Free

For tickets please call  
the AGBU offices at (626) 794-7942

**AGBU SOCIETY DINNER - OCTOBER 13, 2007**  
HUNTINGTON RITZ CARLTON HOTEL - PLEASE MARK YOUR CALENDARS

AGBU GLENDALE / PASADENA CHAPTER

**Y O G A Y O G A Y O G A Y O G A Y O G A Y O G A**

**COME JOIN US IN A FUN CLASS GUARANTEED TO CHALLENGE YOUR MIND AND BODY!**

Mariette is a certified hatha flow yoga instructor and a registered nurse who teaches yoga in the community and to healthcare professionals.

Yoga is a holistic practice which utilizes your body's own energy powerhouse to optimize wellness in the body and mind.

Yoga is neither a religion nor simply a "workout".

LIMITED SPACES

For Information of reservations please call A.G.B.U. office (626) 794-7942

**AGBU SPONSORS**



**Commerces Casino**  
LOS ANGELES



**CROWNE PLAZA**  
HOTELS & RESORTS

6131 E. Telegraph Rd. • Commerce, CA 90040 • 323.721.2100 • 714.879.2100 • [commercescasino.com](http://commercescasino.com)